6043

Чернышевский

Ст. Фитер. Ф. Ф.
Зиц — Ретфельдъ
Петроградъ
Изд. II-ое.

9(47·925)
Ч-83

Ростов 1907 г.

24 JAN 2004
19 AUG 2011

320
Ա-29

ԸՐԵՄԱՅԻՍ

ՄԻ ՔԱՆԻ ԳԼՈՒԽ

ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻՑ

Գինն է 10 կոպ.

ՄԱՄ ԵՐԿՐՈՐԴ

I. Ընդհարումներն՝ ապրիլից յետոյ
II. Դաշնակցութիւնը եւ ինքնապաշտպանութիւնը

(47.925
Q-51

1907 Թ.
ԹԻՖԼԻՍ

6043

(47.925)
Ս-83

ԵՐԵՄԵՑԻՍ

ՄԻ ՔԱՆԻ ԳԼՈՒԽ

ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻՑ

ՄԱՄՆ ԵՐԿՐՈՐԴ

I. Ընդհարումներն՝ ապրիլից յետոյ
II. Դաշնակցութիւնը եւ ինքնապաշտպանութիւնը

ТИФЛИСЪ
Электропечатня „ГЕРМЕСЪ“ С. П. Едигарова
Մաղար. փող. № 5. 1907

(10)

21.02.2013

6140
41

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐՆ՝ ԱՊՐԻԼԻՑ ՅԵՏՈՅ

Յուլիսի 1-ից—12-ը։

Ամիսներ տևեցին 1905-ի աղետալից ընդհարումները։ Ինչքա՜ն չքաշեցին թշուառ հայ և թուրք ժողովուրդն այդ սարսափելի ամիսներում... երկու սպառազինուած բանակների նման՝ ճակատ-ճակատի էին կանգնել դարաւոր հարևանները և երկար ու ձիգ ամիսների ընթացքում հողն արիւնով էին պարարում, օդը վառոդի ծխով լցնում, իսկ այնտեղ՝ մեր իշխանաւորները լոկ հանդիսատեսի դերում, հետաքրքրութեամբ դիտում էին, թէ դժբախտ գլադիատորներից որն է աւելի խորը մխելու սուրը՝ հակառակորդի սրտի մէջ...։

Շուշայ անցեալ ընդհարումներից տասն ամսուա՜ չափ միջոց էր անցել, և այդքան երկար ժամանակամիջոցում բիւրոկրատական կառավարութիւնը իւր ամբողջ սնանկութիւնը ցոյց տուաւ խաղաղութիւն հաստատելու գործում, մեծ ընդունակութիւն ցոյց տալով սակայն սոված ժողովրդից տուգանքներ հանելու մէջ։ Դրա այդ-տարօրինակ քաղաքականութիւնն էր պատճառը, որ [illegible]կեղծ սրտերից բղխած-հաշտութեան—աղաղակները ժայռերին [illegible]ղխուեցին, և երկու կողմերն էլ գաղտնի կերպով սկսեցին [illegible]պատրաստուել, առաջին իսկ բոպէում պատրաստ գտնուելու միմ[illegible]անց յոշոտելու համար։

Պատժող արշաւախմբի Վարանդա մտնելուց յետոյ էլ խա[illegible]ղութիւնը չըտիրեց։ Աղբատութեան դուռը հասած Վարանդա[illegible]ին լցուեց դառնութեամբ ու անվստահութեամբ դէպի կառավարութիւնը, ինչպէս և միւս գաւառներում . . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

Ի՞նչ պէտք է մտածէր այդ բոլորից յետոյ Թուրք խաւար մասսան և նրա մէջ գոյութիւն ունեցող աւազակ տարրը, մանաւանդ նրանք, որ անից-տեղից զրկւած՝ Աղդամի շուրջն էին ապաստանել և լցած էին վրէժխնդրութեամբ... իհարկէ, նրանք այն համոզման կը յանգէին, որ իրանք կարող են ամեն բան անել հայերի վերաբերմամբ ու ճնալ անպատիժ, քանի որ հէնց ինքը, կառավարութիւնը «բարկացած է» հայերի վրայ, և պատժում է չարաչար։

Իսկ ի՞նչ պէտք է մտածէր հայը.—այն, որ միայն ինքն է իւր գլխի պաշտպանը, որ էլ արդարադատութիւն չի ճնացել, և թշնամական զգացմունքներն անծայրօրէն պիտի զարգանար նրա մէջ դէպի իւր հարևանը, դէպի Թուրքը։ Այդպիսի հանգամանքներում էլ որտեղից պիտի իջնէր խաղաղութիւնը, հաշտութիւնը։ Եւ փոխադարձ ոչնչացումները շարունակւում էին անվերջ։ Ճիշտ է, բացարձակ ճակատամարտներ չէին լինում, բայց մանակի թալաններն ու սպանութիւնները դարձել էին մի տեսակ սովորութիւն, և նոյնիսկ պահանջ։

Շատ երկար կը լինէր, եթէ մի առ մի սկսէինք թւել, թէ 1906-ի Ապրիլից յետոյ մինչև Յուլիսի 12-ը, երբ Շուշայ երկրորդ կռիւը պայթեց, ինչեր են անցել ու գնացել աչքի անցնենք Յուլիսի սկզբներում տեղի ունեցած դէպքերը։

Այսպէս՝ դեռ Յունիսի 23-ին պրիստաւ Բագրատ-բէկին սպանելուց յետոյ, Թուրքերը յարձակւեցին Խոզնավար հայ գիւղի վրայ, բայց յետ մղւեցին։

Յուլիսի 2-ին Սիսիանցի Թուրքերը շրջապատեցին հայոց Կուշչի-Թազաքենդ գիւղը, և գիւղն աւերել չկարողանալով՝ տարան միայն 18 գլուխ տաւար։

2-ին Վարանդայի Քռանի գիւղի մօտ Մալը-Բէգլուեցիք սպանեցին Խաչատուր անունով մէկին, իւր 18 տարեկան որդու հետ, որի ձեռները կտրել, տարել էին։

3-ին՝ Խաչէնի Քարագլուխ գիւղացի մէկին հունձ անելու ժամանակ բռնեցին արտում՝ և մորթեցին։

3-ին՝ Շէլլեցիք յարձակւեցին Նախիջևանիկեցիների խոզերն արածացնողների վրայ. խոզարածները փախան. կօզակները վրայ հասան, ձերբակալեցին երկու հայերի, որոնք Շուշայ բանտը նետւեցին։

4-ին՝ Շուշու և Թթու-ջրի ճանապարհին Թուրքերը շրջապատեցին մի հայկական քարւան, թալանեցին, մէկին սպանեցին, մի քանիսին էլ գերի տարան։

4-ին՝ երեկոյեան ժամի 9-ի մօտերը Մալը-Բէգլուեցիք դարան մտնելով՝ սպանեցին Ն.-բէկ Շահնազարեանցի կինն ու ծառան, իսկ այգեպանին վիրաւորեցին։

5-ին՝ Աղդամի մօտերը գտնւող Ահմէդ-վար գիւղացի Մուխտար Հաջի Զէյնալ օղլին մօտենալով Խրամորթ գիւղին, կանչում է և ասում.—մեր ժողովը որոշել է, որ ձեր գիւղը հիմնայատակ կործանենք, ձեզ էլ կոտորենք. բայց որովհետև քաջ ժողովուրդ էք, ափսոսում ենք ձեր արիւնը թափել. այդ պատճառով առաջարկում ենք ձեզ՝ վճռել—կամ ընդունել մահմէդականութիւն, կամ սրի ու կրակի մատնւել։

5-ին Թուրքերը շրջապատեցին Սիսիանու Ղալաջղ փոքրիկ հայաբնակ գիւղը. սակայն հայերը 8 կօզակների օգնութեամբ՝ նրանց յետ մղեցին։

6-ին՝ Թուրքերը մեծաքանակ ուժերով նորից յարձակւեցին Ղալաջղի վրան, շրջապատեցին և հիմնայատակ կործանեցին, կրակի տալով տները։ Սպանւում են երեսնաչափ հայեր, մնացածը մի հրաշքով փախչում ազատւում են։

7-ին Մալը-Բէգլուեցի յայտնի աւազակ Նաղին իւր ընկերներով յարձակւեց Խնածախ գիւղի վրայ (Զանգ) բայց յաջողութիւն չունեցաւ. սպանւեց ինքը և իւր վեց ընկերները։

8-ին՝ Աւդալ-Գիլաֆլի աւերակներում Թուրքերը դարանամուտ լինելով՝ հրացանազուրկ արին Վարազարոյնեցի մի երիտասարդի, որ անցնում էր վերևի ճանապարհով, և ձեռքը կտրելով՝ տարան։

9-ին՝ Մալը-Բեգլուեցիք գերի տարան մի Շօշեցի տղի և մորթեցին։

Այսպէս՝ անվերջ. և դրա անունը՝ իբրև թէ խաղաղութիւն էր։ Եթէ սրայ վրայ աւելացնենք և այն, որ հայերն էլ նոյն կերպ էին պատասխանում Թուրքերին, մարդիկ թալանելով ու սպանելով, ապա հասկանալի կըլինի, թէ որքան էր էլեքտրականացած մթնոլորտը։ Զուր ժամավաճառութիւն կը լինէր դէպքերի մի առ մի թւելը. մանաւանդ որ հնարաւորութիւն էլ չկայ. անթիւ փաստեր չեն արձանագրւել իրա ժամանակին, որովհետև, կրկնում

եմ, թալանն ու սպանութիւնն արդէն սովորական երևոյթներ էին դարձել, և ուշադրութեան չէին արժանանում։ Իսկ այդ անիշխանութիւնը տիրում էր այն ժամանակ, երբ փոխարքայի օգնական Մալաման Շուշի էր եկել և դիմողներին յայտարարում, թէ՝ այդ բոլորը սովորական աւազակների գործեր են. այն ժամանակ երբ գեներալ Գալաշչապովը դեռ Մայիսի երկրորդ կէսից Շուշի էր ժամանել և աջ ու ձախ շանթեր էր արձակում իւր սպառնագին պահանջներով ու հրամաններով։ Բայց ոչ Աղդամի ճանապարհին ճանապարհորդ հայերին սրախողխող անող թուրքերը պատժուեցին, ոչ էլ Ասկերանի ճանապարհին սայլապան թուրքերին կոտորող հայերը. միշտ, ամեն տեղ, ամեն ժամանակ բոլոր ոճրագործները մարդասպանները, հրդեհաձիգներն անպատիժ մնացին և քինախնդրութիւնը սոսկալի չափերի հասնելով՝ վերջապէս պայթեց Յուլիսի 12-ին։

Յուլիսի 12-ին։

Հայերն ու թուրքերը Շուշում վաղօրօք դիրքեր պատրաստած՝ զգուշութեամբ դիտում էին միմեանց շարժումներ, անակնկալների չհանդիպելու համար։ Մի փոքրիկ պրովակացիա, մի չնչին պատճառ՝ և պէտք է սկսէր արիւնը հոսալ քաղաքի փողոցներում։

Առիթը չուշացաւ։

Առաւօտեան հայ և թուրք թաղերի սահմանում թուրքերն սպանում են շուշեցի Սահակ Միրզայեանցին։ Սպանութեան մասին իմաց է տալիս գեներալին, և ժամը 11-ին գալիս են կառավարութեան պաշտօնեաները, այդ դէպքը քննելու։ Եւ երբ նրանք բազմաթիւ հայերի հետ մօտենում են դիակին, յանկարծ թրքական դիրքերից որոտում են հրացանները։ Պաշտօնեաներն ու հաւաքուած ամբոխն իսկոյն փախուստի են դիմում և ապաստանում հայկական մասում։ Այդ իսկ բոպէին ինքնապաշտպանութեան խմբերը հայկական թաղերի դիրքերն են գրաւում և գեներալ-նահանգապետ Գալաշչապովի թնդանօթների, զօրքերի ու կօզակների ներկայութեամբ՝ սկսւում է Շուշայ ողբերգութեան երկրորդ գործողութիւնը։

Երեկոյեան ժամը 4-ին մօտերը սուրհանդակը Շուշուց արշաւասոյթ Վարանդա հասաւ։ Բերած տեղեկութիւնները սասանեցնող էին... ռուսը, թնդանօթ, տասնեակ հազարներով գնդակներ... սպանուածներ... հրդեհ...—ահա նրա բերած լուրերը։

—Դէպի Խաչէն էլ է սուրհանդակ գնացել։ Շուշին կը պաշտպանուի. մինչև ճանապարհելը՝ յաջողութիւնը հայերի կողմն է եղել. բայց այնտեղ դողում են, թէ՝ մի՛ գուցէ Ասկերանից օգնական ուժեր հասնեն թուրքերին։

Էլի՛ Ասկերանը...

Այնտեղ քսանհազար ռուս զինուորներ կային, որոնք դրուած էին Աղդամից Շուշի անցնող առևտրական և ճանապարհորդ թուրքերի համար Ասկերանը ապահով դարձնելու, իսկ զինուած խմբերի՝ առաջը փակելու։ Բայց բոլորին յայտնի էր, թէ նրանք որքան ընդունակ պէտք է լինէին իրանց յանձնուած գործի մէջ։ Մարդկոցներից քիչ բարձր, Վարանդայի և Խաչէնի կողմից՝ ինքնապաշտպանութեան պահակները կային, բայց շատ էին քչուոր. իսկոյն ուղարկուեցին երկու օժանդակ խմբեր՝ կիրճը միանգամայն ապահովելու համար, ապա սուրհանդակներ՝ դէպի գաւառի բոլոր կողմերը՝ հրահանգներով, որ թուուցիկ խմբերը կենտրոնանան այս կամ այն վտանգաւոր կէտերում։

Գիւղացիութիւնը վարժուել էր. ամենքն իրանց գործը գիտէին. կը պաշտպանուէին. բայց հացն արդէն պակասում էր... կարկուտը սրբել, տարել էր նրանց արտերը և այժմ նրանք պատրաստ էին ամեն բանի. էլ կեանքը չէր գնահատւում։

Այդ օրը ոչ մի տեղ, ոչ Մուղանլուի գլխին, ոչ Գիլաֆլուի բուսունում, ոչ էլ Ղարաղաջի մօտ՝ թրքական խմբեր չերևացին. մէկ-մէկ միայն դաշտի բերանով սայլեր էին անցնում, բեռնաւորուած Նախիջևանիկի և Վարազաբոյնի այգիների կտրտած ծառերով։ Կարծես նրանք այլ ևս տրամադիր չէին Ասկերանին մօտենալու. անցեալ դառն օրերի յիշատակը նրանց զգոյշ էր դարձրել։ Միայն գիշերուայ ժամը 2-ին մօտերը, Զհան-Բաշլարի աւերակների տակով ընկած կածանում, ինքնապաշտպանութեան չորս հոգուց բաղկացած շրջիկ խմբակը հոտ է վերցնում ինչ որ խորհրդաւոր ճանապարհորդների, ու նրանց տեսնել չըկարողանալով՝ սկսում է կուզէկուզ մօտենալ, և յանկարծ դէմուդէմ են գալիս երեք թուրքերի։ Առանց հրացանի դիմելու՝ ուզում են նրանց բռնել, բայց նրանք գոռում են, նեռւում չորս կողմը տարածուած խիտ-խիտ թփերի մէջ և անհետանում, մի արեխ միայն թողնելով։

լով հետապնդողների ձեռքում։ Յետոյ միայն պարզուեց, որ դրանք Շուշուց դէպի Աղդամ իջնող սուրհանդակներ են եղել։

Յուլիսի 13-ին։

Առաւօտեան վաղ ինքնապաշտպանութեան դեկավարները ելան Բեաթուկի կողմին ցցած սարի գլուխը, որտեղից Շուշին հայելու նման է երևում։ Ի՜նչ Շուշի... քսան վերստի վրայից լսող թնդանօթների խուլ դղրդոցները ցոյց էին տալիս, թէ այնտեղ ինչեր են կատարուում։ Ահա լռեց... մի քանի րոպէ էլ, և մի կէտից դուրս թռաւ թանձր, բամբականման ծուխ... ձայն չկայ, վայրկեաններն անցնում են... ղը՜ռ՜... թնդանօթն էր, որոտաց։ Նորից ծուխ, նորից բօմբիւններ... արևելեան դարպասից քիչ բարձր, թրքական թաղերի այս ու այն անկիւններում սև-կեղտոտ ծխեր են երևում. այդ թուրքերի տներն էին այրւում... իսկ քանիսն էին այդ րոպէին մեռնում, քանի՞ տներ էին որբ մնում...։ Տեսարանը քստմնեցուցիչ էր և զարհուրեցնող։

Ժամը 8-ին Ասկերանից ներքև լսող հատ-հատ հրացանաձգութիւնները կարճ ժամանակում փոխուեցին հաժաղարկերի։ Թուրքերը, թւով երեք հարիւր, յարձակւել էին Խրամորթ գիւղի վրայ։ Խրամորթը յայտնի էր իւր հերոսութեամբ՝ դեռ անցեալ կռիւներից. նա այդպիսի յարձակումների չէր դիմադրաւել. մանաւանդ որ Խաչէնու թռուցիկ խումբն արդէն օգնութեան էր հասել։ Պէտք է սակայն խոստովանել, որ թուրքերն այս անգամ մեծ հաժառութիւն ու տոկունութիւն ցոյց տուին, և 9 ժամու չափ կռիւ մղելուց յետոյ էլ դեռ նրանք չէին ուզում թողնել իրանց գրաւած դիրքերը։ Բայց թռուցիկ խումբը կտրիճ գիւղացիների հետ դուրս են վազում դիրքից, սեպաձև մխւում հակառակորդների շարքերի մէջ ու նրանց շփոթեցնելով՝ քշում մինչև թրքական Զուխուր-Մահալու գիւղը։ Թուրքերը տալիս են չորս զոհ, իսկ հայերից սպանւում է զինւոր Զումշուդը, մի կտրիճ երիտասարդ էլ վիրաւորւում է։

Վարանդայի և Խաչէնու սահմաններում այդ օրւայ Խրամորթի կռիւն էր միայն, որ պատահեց. ծայրերը հանդիստ էին երևում։

Յուլիսի 14-ին։

Շուշուց եկող բոլոր լուրերը միայն մի բան են պնդում,

որ թուրքերը սոսկալի վնասներ են կրել, հարիւրաւոր տներ են վառւել, իսկ կին ու երեխաներ հաւաքւել են բանտի պարսպի տակ, իբրև ապահով տեղ։

Ասկերանի շուրջը ոչինչ չէր երևում այդ օրը։ Իսկ երկու գաւառների դեկավարները հաւաքւել էին Խանարադի տակ ընկած այգիներից մէկը խորհուրդ անելու, թէ՝ որչափ այժ կարող են օգնութեան ուղարկել Շուշեցիներին։ Որոշեցին ինկատի ունենալով, որ դեռ երէկ արդէն ուղարկւած էին չորս ընտիր տասնեակներ, ապա առ այժմ բաւականանալ դրանով, միայն կենտրոնում դնել վեց տասնեակ, որ կարևոր եղած րոպէին կամ Շուշի հասնէին, կամ Ասկերան։

Յուլիսի 15-ին։

Առաւօտեան լոյսը չբացւած՝ հրացանների ճռռոցներ բարձրացաւ Թաւ-Գեադուկի կողմերում, Խրամորթ և Բարագլուխ գիւղերի ուղղութեամբ։ Ձայները շատ էին խուլ, և նմանում էին Շուշուց քսան վերստի վրայ լսող թնդանօթների խուլ բոմբիւններին։ Ենթադրողներ եղան, որ այդ՝ կառավարութիւնն է այդպէս վաղ մի որ և է գիւղ ռմբակոծում, կամ կռիւ է միայն Խաչէն գետի վրայ, Սարխավանդի ձորերում։ Բայց քանի գնաց, ձայներն աւելի որոշակի դարձան և լոյսը բացւելուց՝ բազմաթիւ թուրք խմբեր երևացին Խրամորթի տակ վխտացող և Թաւ-Գեադուկն ի վեր, դէպի Բարագլուխ արշաւող։ Պարզուեց, որ թուրքերը գիշերւայ մթութիւնից օգտւելով, կարողացել էին աննկատելի կերպով գալ ու Բարագլխի տակ խմբւել, ապա իրանց թևերը տարածելով յարձակւել այդ երկու գիւղերի վրայ։ Դժբախտաբար հէնց այդ գիշեր այդ գիւղերին հսկող թռուցիկ խումբը փոխադրւած էր Խանարադ, իբրև Ասկերանին աւելի մօտիկ կէտ, որովհետև լուր էր ստացւել, որ առաւօտեան Ասկերանը պատռել պիտի ցանկանան Աղդամից Շուշի անցնել ցանկացող թուրքերը։ Գիւղերն իրանք պէտք է դիմադրէին։ Եւ թուրքերն սկզբում տատանւելով ապա մեծ ինքնավստահութեամբ գրոհ են տալիս. սակայն բազմաթիւ յարձակումներից գլուխն ազատած գիւղացիք այս անգամ էլ չեն շփոթւում յանկարծակի արշաւանքից, և սկսւում է մի անհաւասար, կատաղի մենամարտ։

Ասկերանի պահակախմբից Վարանդա հասաւ սուրհանդա-

կը, լուր բերելով կուի մասին.—Խաչէնու Թռուցիկն արդէն հասել է օգնութեան, բայց Թուրքերը գրաւել են ժայռը.—ասաց նա։

Այդ արդէն վատ նշան էր. ժայռը կախուած է Խրամորթի գլխին. այնտեղից կարելի էր տասը հոգով ամբողջ Խրամորթը իւր տեղում մեխել, և Քարագլխի հետ հաշիւը վերջացնել։

Տեղում գտնուող զինուորները շուտափոյթ կերպով ձիանքը հեծան, օգնութեան հասնելու. բայց այդ իսկ րոպէին՝ Շէլլուի գլխից հինգ հարիւրաչափ Թուրք ձիաւորներ սրարշաւ հասան Նախիջևանիկի տակ գտնուող Մոսունց-Թափա կոչուող բլրակը, մի անկանոն համազարկ տուին և Մարզլլուի կողմից օգնութեան եկող հարիւրաւոր ձիաւորներին միանալով տարածուեցին մինչև Ղզըլ-ջաբէլ, չորս վերստի վրայ շղթայ կազմելով։ խնդիրը պարզուեց. Թուրքերն այժմ որոշ ծրագրով էին շարժուում. մինչդեռ իրանց մի ստուար գունդը Խրամորթին ու Քարագլուխը պիտի աւերէր. միւս մասն էլ Շէլլուի մօտ Վարանդայից օգնութեան հասնող հայերի առաջը պիտի փակէր, կամ թէ ցոյցեր անելով՝ տեղում գտնուող ուժերն զբաղեցնել։ Եւ նրանց լաւ մտածած հաշիւը շատ ճիշտ պիտի դուրս գար եթէ եղածից աւելի տոկունութիւն ցոյց տային։

Վարանդայից դէպի Քարագլուխ վազող խումբն ստիպուած եղաւ կանգ առնել. չէր կարելի թրքական մի այդպիսի պատկառելի ոյժ թողնել Նախիջևանիկի, Փիրջամալի ու Վարազաբոյնի դիմաց, և անցնել, գնալ։ Ուստի փոքրիկ մասերի բաժանուելով՝ զանազան ուղղութեամբ մօտեցան դիրքեր գրաւած Թուրքերին ու կռիւը բորբոքուեց։ Թուրքերը մի երկու կէտերից դուրս գալով՝ ուժեղ ճնշում գործ դրին հայերի կողքն անցնելու, բայց այդ թոյլ չտուեց նրանց. քաջարար յետ էին մղում նրանց այդ տեսակ բոլոր քայլերը։ Մի ժամից յետոյ շրջակայ գիւղերից վրայ հասան խմբապետները՝ զինուած գիւղացիների հետ և մի այնպիսի ուժեղ յարձակում գործեցին, որ Թուրքերը Ղզլջաբէլից յետ քաշուելով, յաջորդ դիրքերին անցան, սակայն Մոսունց-Թափան ձեռքից չտալով, որի թիկունքը պահում էին այգիներում նստած Թուրք խմբերը։ Բայց կուի տաք րոպէներում երբեմն ժարդ կորցնելով հաւասարակշռութիւնը, խելագարութիւններ է անում. այդպէս էլ վարուեց ինքնապաշտպանութեան դեկավարներից մէկը. տասներկու հոգուց բաղկացած Թռուցիկ խմբ-

բով նա զարկեց, անցաւ Փիրջամալի կորեկի արտերի միջից, գլուխը շուռ տուաւ դէպի Մ.-Թափան, ձիանքը սանձարձակ քշած՝ միասին համազարկ տուին բլրակի վրայ ամրացած Թրքական խմբին և առաջ սլացան։ Այդ յանդուգն քայլից Թուրքերն այնպէս շփոթեցին, որ մի գնդակ անգամ արձակել չըկարողացան, Թողեցին բլուրն ու ձի նստելով՝ արշաւասոյթ ծածկուեցին մօտակայ այգիներում։

Միւս կողմից էլ Թուրքերն իրանց ձեռքերում գտնուող դիրքերը յաջորդաբար Թողեցին և չորս վերստի վրայ տարածուած շղթան հաւաքելով՝ կամաց-կամաց խմբուեցին, երեք կողմից հայերով շրջապատուած, իսկ մէջ տեղ արդէն սեպաձև խրուած էին Մոսունց-Թափի վրայ գտնուող զինուորները։ Քեաթուկի սարերից իջան ինքնապաշտպանութեան նորանոր խմբեր և այդ ահեղ ուժով վրայ արշաւելով՝ Թուրքերին հաւաքեցին Շէլլու գիւղի մէջ, որտեղ էլ նրանք մնալ չը ցանկացան և փախուստ տուին դէպի այգիները։ Շէլլուն մնաց անպաշտպան. նրա համար ստեղծուեցին Աւդալ-Գիլաֆլի յար և նման պայմանները. այնտեղ էլ Թուրքերը, օգնութեան եկած, կռիւ սարքող Թուրքերը Թողել ու փախել էին, գիւղերը Թողնելով բախտի կամքին։ Շէլլուի ներքևի ծայրից կամաց-կամաց բեռնաւորուած սայլեր, կին ու երեխաներ երևացին, որ ճիչ ու վայնասուն բարձրացրած, փախչում էին ցած, դէպի Աղդամի կողմերը։

—Շէլլուն, Շէլլուն,—գոռացին կատաղած գիւղացիները.—աւերենք Շէլլուն։

Եւ ի՞նչ մի դժուարին բան էր անպաշտպան Շէլլուն մոխիր դարձնելը, մի ժամուայ մէջ միայն կարելի էր նրան հիմնայատակ կործանել, աներն աւերել։ Բայց Դաշնակցութեան ներկայացուցիչները զսպեցին նրանց մէջ աւերելու հակումները, խուլ տրրտունջ առաջացնելով գիւղացիների մէջ։

Այս երկրորդ անգամն էր, որ Շէլլուն ազատուում էր աւերումից. մի անգամ Յունուարի 6-ին, և մէկ էլ՝ այսօր. և այդ շնորհիւ Դաշնակցութեան ներկայացուցիչների. որի դէմ այնպէս փըրփուրը բերանին Աղաևն է մաքառում։

Իսկ Խրամորթի շուրջը կռիւը դեռ շարունակուում էր աւելի մեծ թափով. այնտեղի կուռողներին օգնութեան հասնելու ձգտումներ էին ցոյց տալիս և Շէլլուն թողնող, այգիներն ապաստանող

թուրք ձիաւորները։ Բայց մի ժամ յետոյ էլ աւելորդ էր այս կամ այն կողմին օգնութեան գնալը, որովհետև Խաչէնու կենտրոնից հասել էր մի թուրքիկ խումբ տեղական ուժերի հետ և ժայռը ժաքրել յարձակումներից, իսկ Ասկերանից էլ այնտեղ էր անցել մի փոքրիկ խմբակ, և Ղարաղաջի մօտ գտնուող թրքական հանգստարանից զարկելով՝ թուրքերի թիկունքը բռնել։ Թուրքերը պարտուած յետ են խաղում վերջապէս Շէլլի մօտ թողնելով 7 դիակ, 3 ձի, իսկ Քարագլխի մօտ՝ 8 դիակ, 7 ձի, մի հրացան և մի դրօշակ. վիրաւորների թիւը յայտնի չէ։ Հայերից սպանուում են Քարագլխի կուռում երկուսը, երեք հոգի էլ վիրաւորուում են։

Իսկ Ասկերանի պոստում գտնուող կառավարական զինուորները ժպտով դիմում են վերադարձող հայերին.—Է, յաղթեցիք...։ Դրանք դրած էին զինած խմբերի անց ու դարձն արգելելու...

Գիւղացիք էլ, կուից յետոյ՝ էլի հին երգը։

—Էս ինչ տեսակ բան է. էսպէս էլ անտիրութիւն կը լինի... Բանը սա է, որ էգուց էլ գալու են, մտրակի ու զօնդաղի տակ տան, թէ էսքան էսքան տուգանք պէտք է տաք, որովհետև կըռիւներ էք անում. կամ թէ՝—զէնքերը տուէք, «կոմիտէները» տուէք։

I.

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ.

Վարանդայում և Խաչէնում այնուհետև տեղի ունեցած կռիւների նկարագրելն աւելորդ է. միևնոյն բաներն են. յարձակում, հակայարձակում, այստեղ սպանուած, այնտեղ վիրաւոր, այստեղ թալան, այնտեղ աւեր, և այլն։

Յուլիսի 15-ից յետոյ երկու կռիւ եղաւ Ասկերանի մօտ, մի անգամ՝ Շէլլի կողքին, երկու անգամ՝ Լազին-Ջայի տակ, մի անգամ Գելաֆլի աւերակներում և մի մեծ ճակատամարտ՝ Բաղանլարի գլխից մինչև Գելաֆլի «Քեահրիզը», մի կռիւ, որի ժամանակ Խաչէնու թուրքիկ խումբը իւր յանդգնութեամբ հիացրեց թէ հայերին և թէ թուրքերին։ Նա սոսկալի թափով տաւ, անցաւ Շէլլի կողքով, Ամարաթի գլխով և այնպէս ընկաւ թուրքերի վրայ բաց դաշտի մէջ, որ թշնամին փախաւ մինչև Բաղվանլար, իսկ թուրքիկ խումբը կանգ առաւ միայն Դարղա-

Ալուն կալումը, հայկական սահմաններից շատ ու շատ հեռու։

Այս անգամ մենակ թուրքերը չէին յարձակումներ գործողը. հայերն էլ փորձեցին հոչակաւոր Մալը-Բէգլուն աւերել և առաւօտուն դէմ, գիւղը պաշարելով սկսեցին յարձակումը. թուրքերը դիմադրում էին մեծ քաջութեամբ. բայց հայերը զօռեցին և մտան գիւղը։ Բայց այդ իսկ բոպէին Խանքենդուց որ $^1/_2$ ժամուայ վրայ է գտնուում, վրայ հասան զօրքեր և մի թնդանօթ. թնդանօթը որոտաց, և ռումբը պայթեց գլխաւոր դիրքում, որտեղ հայերն ամրացած շարժումն էին ղեկավարում։ Դրանից յետոյ հայերն յետ խաղացին, իրանց հետ տանելով երկու դիակներ և երեք վիրաւոր։

Յուլիսի 29-ին Վարանդայի և Խաչէնի ամէն կողմերում լսեցին հրացանները և մեռելային խաղաղութիւնն ընկաւ։ Կատարեալ «մեռելային», որովհետև երկու կողմերի տներն էլ քանդուել էին, և ժողովուրդն ուժասպառ եղել նիւթապէս և ֆիզիքապէս։

Շուշին այս անգամ արդէն կատարեալ աւերակ էր դարձել. այնտեղ մղուել էր մի սոսկալի պատերազմ, որի հետևանքը թուրքերի համար զարհուրելի էր եղել. այրուել էր նրանց 2-300 տները, բազմաթիւ զոհեր էին տուել, և այժմ էլ շրջապատուած ամէն կողմից հայերով, յարաբերութիւնները խզուած ամէն անկիւնից՝ սովամահ էին լինում։

Կռիւը տևել էր 12 օր, որի վերջին օրերի համար մի գաղափար տալու դիտաւորութեամբ՝ առաջ եմ բերում «Ալիք»-ի թղթակցի հետևեալ կտորը։ «Սկզբում թուրքերն առարկում էին հայերի դրած պայմանի առաջին կէտի դէմ, որ վերաբերում է «Դիկտան-Ղուրու» և Գեօվհար-Աղի դիրքերի ոչնչացման։ Թուրքերը բացէ իրաց մերժել էին, ուստի հայերը վերսկսած կռուում, կիւրակէ առաւօտ, կրկնակի եռանդ գործ դնելով, օդը ցնդացրին «Դիկտան-Ղուրու» վիթխարի դիրքը։ Թուրքերը կանգ առան։ Նորից հաշտութեան դիմումներ։ Եղաւ մի թեթև թափոր։ Սակայն պարզ նկատուում էր, որ թուրքերը ինչ-որ զժոխային պատրաստութիւններ են տեսնում։ Հայերը պնդեցին պայմանագիրը ստորագրել, հրաժարուելով առաջին կէտից։ Թուրքերը ձգձգում էին։ Վերջապէս մի ուրիշ կէտ ևս ջնջելով, ուրբաթ նշանակում են վերջնական ժողով։ Սակայն թուրքերը նորից չկան։ Իրիկնադէմին նրանք գրում են, որ այդ օրը չըկարողացան գալ իրանց

կիրակիի պատճառով, սակայն վաղը, շաբաթ անպայման կըգան եղբայրասպան կուին վերջ դնելու։ Ապա մի շարք բարոյա-փիլիսոփայութեամբ դատափետում են ամբողջ անցեալը և «հրաւիրում են հայերին հանգիստ մնալ»։

Ջանձրացած երկար ժողովներից ու բանակցութիւններից, յոգնած և ուժասպառ 12 օրեայ կուից, անքուն ու ջղային՝ հայերը ցրուեցին հանգստանալու...

Սակայն սա մի նենգ օրօր էր, մի ժանգ դաւադրութիւն, երբ քիչ մնաց, որ բոլոր հայերը սրի անցնուեն։

Նախ մի երկու խօսք անցրած վերջին օրերի մասին, երբ թէև կուիւ չըկար, սակայն ընդհանուր դրութիւնը աւելի քան սոսկալի էր։ Քաղաքի թէ ներքևից և թէ ժանաւանդ վերևից թուրքերը մեծ խմբերի բաժանուած ամենայն համառութեամբ ճգնում էին ներս խուժել քաղաք։ Հերոսական էր հայերի դիմադրութիւնը։ Ամեն կէտերից էլ թուրքերը յետ էին մղւում տալով մեծ զոհեր։ Քաղաքի թուրքերն էլ հէնց դրսի այս օգնութեան վրայ մեծ յոյսեր դրած, շարունակում էին հայերին սպառնալ, միւս կողմից էլ օյինբազութիւններով հաշտութիւնը յետաձգել։ Ի դէպ ասած, վերջը պարզուեց, որ բայց և այնպէս, թուրքերը դրսից օգնութիւն են ստացել երկու խմբերով, մէկը բաղկացած 100—150 հոգուց, միւսը աւել քան 580 սպառազինուածներ, դրան վերագիր և երկու թնդանօթ։ Այս ամենից բացի և որ ամենակարևորն է, «բարեսիրտ» մարդիկ թուրքերին լուր էին հասցրել, որ հայերն այլ ևս փամփուշտ չունեն։ Ահա թէ ինչու թուրքերը վերջին օրերը խիստ համարձակ էին։

Այսպէս ուրբաթ, ամսիս 21-ին, կէսօրից յետոյ, թուրքերը նամակով հայերին հանգստացրել էին և հայերն էլ ցրուել էին ննջելու։

Ժամը 7-ին մօտ էր, երբ զարհուրելի լուրեր բերին, թէ թուրք օֆիցերը Գալաշչապովի հրամանով, փախած թուրքերին վերստին իրանց դիրքերում հաստատել է և հայերից պահանջում է գրաւած դիրքերը դատարկել։ Կոտորածն անխուսափելի է։ Հայերի համար խիստ վտանգաւոր է մանաւանդ այն պատճառով, որ թուրքերին իրանց դիրքերում ամրացնելուց յետոյ, թուրք սպան իւր զօրքերով հայերի թիկունքն է անցել, շեշտելով թէ մինչև կէս ժամ ձեզ ցոյց կը տամ։

Խլրտումը մեծ էր։ Ժողովուրդը լցուեց փողոցները։ Բողոքը խիստ էր. Գալաշչապովը ստիպուած եղաւ իւր ադիւտանտին թիւրիմացութեան վայրն ուղարկելու, որ կոչւում է Աղա-Բիզի դիրք։ Գնացինք և մենք, հետաքրքիրների մի մեծ խումբ, բոլորն էլ անզէն։ Ադիւտանտը թուրքերին թոյլ տուեց վերադառնալ իրանց նախկին դիրքը որ անցեալ շաբաթ գրաւել էին հայերն արեան ամենաթանգ գնով։ Իսկ հայերը դիրք մտան 25 քայլի վրայ շտապով կառուցած քարէ պատնէշի ետև։

. . . . . .
. . . . . .
. . . . . .

Թուրքերը պատրաստ էին յարձակման, իսկ հայերը շտապում էին դիրք պատրաստել պաշտպանուելու։ Ադիւտանտն ու թուրք սպան մօտեցան թուրքերին և ինչ որ դաղտնի փըսփսում էին։ Այդ վայրկեանին թրքական թաղում պայթեց սիգնալի մի հրացան և մինչ ես կամեցայ այն կողմը դիտել, նենգամիտ թուրքերը համազարկերի կարկուտ տեղացին մեզ վրայ։ Հայ կուսողները դիրք մտան, անզէնները փառաւոր փախուստ տուին։ Այս ամենը կատարուեց մի ամենաչնչին վայրկեանում։ Առաջի համազարկին գլորուեց մի վրացի զինուոր։ Իսկ մեծ փողոցում գեներալ Գալաշչապովը մի մեծ խումբ երեխաներ գլխին հաւաքած՝ մեծ զարմախօսութեամբ պատմում էր Պլէվնայի ճակատամարտի մասին։ Կոտորածը դադարեցնելու ոչ մի ցանկութիւն։ Ի՞նչ հոգ, թէ երկու թշուառ ազգ կոտորուում են։

Կռիւն այլ ևս բորբոքած էր։ Անմխիթար էր մանաւանդ հայերի համար, որովհետև խաղաղութեան յուսով, բոլոր կուսող ուժերը ցրել էին, մնացել էին, հազիւ մի քանի հարիւր հոգի, իրանց դիմացն ունենալով մի վայրենի ոյժ, բաղկացած աւելի քան ութ հարիւր հոգուց (միայն մի թաղում)։ Հայ հերոսը այս գիշեր ևս ապացուցեց իւր ուժգնութիւնը։ Օրհասական կուից յետոյ, առաւօտեան թուրքերը նորից յետ մղեցին «Աղա-Բիզի» դիրքից, տալով անթիւ սպանուածներ։ Գալաշչապովը տեսաւ, որ հայերը նորից յաղթեցին և թրքական մասը պիտի աւերեն, և հրամայեց.—դադարեք. ես այլ ևս Գալաշչապով չեմ, այլ գեներալ-գուբերնատոր։

նատոր։ Հրամայում եմ թնդանօթի կապել ընդիմադրողին։—Եւ կէսօրից յետոյ խաղաղութիւն ընկաւ։

Հասաւ երեկոն։ Լռութիւն է, խորին լռութիւն։ Լուսինը փայլում է կաթնագոյն, կեանքը սահում է... Սակայն... աւերակները կանգուն, սպանուածներն անշունչ!!!»։

Կիսաւեր Շուշին 12 օր դժոխքի սարսափներ կրելուց յետոյ, հանգստացաւ. բայց յուղարկաւորութեան հանգստութիւն էր այդ. մարդիկ կենդանի մեռածներ էին։

II.

Թ Ա Փ Ո Ր

Թափոր... ծանօթ բառ է դա, ծանօթ կոմէդիա։ Հայ-Թրքական ընդհարումների սկզբից մինչև այսօր քանի-քանի անգամ են կրկնուել այդ թափորները. Բագու, Բալախանի, Նախիջևան, Երևան, Գանձակ... ամեն տեղ փորձուել է այդ ծիծաղելի դարձած հաշտեցնելու զէնքը. և ամեն անգամ էլ, համբոյրներից յետոյ՝ վերսկսել են կոտորածներն ու աւերումները։

Այժմ էլ թափոր։ Այդպէս է պահանջում գեներալ Գալաշչապովը. ոչ մի առարկութիւն ոչ մի պատճառաբանութիւն նա լսել չի ուզում.—վաղն առաւօտեան թափոր պէտք է լինի,—պահանջում է նա և որովհետև աւելի շատ ՀԱՍԱ կրողները Թուրքերը պիտի լինին, ապա առաջինը հայերը պէտք է իջնեն Թրքական մասը։

Եւ հայերը հաւաքւել են հայկական մասում գտնուող կլուբն ու խորհուրդ են կազմում, թէ ինչպէ՞ս անեն, ժամանակը կարճ է, իսկ վաղը, Օգոստոսի 1-ին առաւօտեան թափորը պէտք է կազմուի։

—Մենք այլ ևս չենք հաւատում ոչ մի թափորի,—ասում է Դաշնակցութեան ներկայացուցիչը,—բաւական է, որքան խաբեցինք. այդ կոմէդիաներն, այդ ծաղրածութիւններն առաջին անգամը չէ, որ մենք տեսնում ենք. միթէ՞ շատ է անցել անցեալ թափորից, խաղաղարար մասնաժողովներից, որ գաւառից-գաւառ, գիւղից-գիւղ պտտելով՝ հաշտութիւն էր կանչում. ի՞նչ եղաւ այդ ամենի հետևանքը. ահա աչքներիս առաջն է։ Մենք ոչ մի կոմէդիայի ժամանակցել չենք կարող, և չենք ուզում։ Թափորները չեն,

որ պէտք է վերջ տան այս սարսափներին. մենք ուրիշ միջոցներ ենք ցանկանում տեսնել կառավարութիւնից։

Քիչ լռութիւնից յետոյ ձայն խնդրեց մի ուրիշը և խօսեց ճնշուած ձայնով։

—Այո, պարոններ, ամենայն կերպ համաձայն եմ, որ կոմէդիա պէտք է լինի մեր արածը. բայց ի՞նչ անենք ասացէք. դժբախտութիւնները կարկտի նման միմեանց յետևից թափւում են մեր գլխին. մի գուցէ մեր յետ կանգնելով ևս մենք առիթ տանք մի նոր դժբախտութեան։ Ի՞նչ կ՚ասեն Թուրքերը, ի՞նչ կասէ կառավարութիւնը,—ահա, կասեն նրանք,—հայերը հաշտւել չեն ուզում։ Մեր ի՞նչն է պակասում. քաղաքացի՛ լինենք մի քիչ և այս անգամ էլ կազմենք թափորը։ Ես չէի ցանկանայ, որ Թուրքերը մեզ չհասկանան, և խնդիրը ծուռ ըմբռնեն։

—Թող ծուռ ըմբռնեն, թող հասկանան, ինչպէս որ իրանց կամքն է, թող գեներալն էլ ոտները գետինը թակէ,—գրեթէ գոռաց աչքի ընկնող քաղաքացիներից մէկը,—ես որ այս քաղաքի աչքի ընկնող մարդկանցից մէկն եմ, և իմ բացակայութիւնս գուցէ նրկատուի, երբէք չեմ մասնակցի այդ խայտառակութեանը... կախաղան պիտի հանեն. թող հանեն. չեմ ուզում և չեմ գնայ։ Մինչև երբ այսպէս մեզ խաբեն. ես հրապարակօրէն իմ անվստահութիւնս եմ յայտնում կառավարութեանը՝ թափորին չմասնակցելով. թափորները չեն, որ մեր վերքը պիտի դարմանեն. խորապէս համոզուած եմ, եթէ կառավարութիւնն անկեղծօրէն կանգնէ ու կանչէ՝—վերացի՛ պրովակացիան, չլինին կոտորածները,—ամեն բան կըվերջանայ։ Այս էր իմ ասելիքս. այժմ ինչպէս ուզում էք, այնպէս արէք։

Խօսեցին էլի մի տասն հոգի. բոլորն այրուած, բոլորը յուզուած, և մեծաւ մասամբ ընդդէմ թափոր կազմելուն. բայց տատանւում էին, թէ ի՞նչ պատասխան տան Գալաշչապովին։ Մէկը խորհուրդ տուաւ, և շատերն ընդունեցին, որ գնան գեներալի մօտ, յայտնեն, որ վաղը զոհերին պէտք է հողին հանձնեն, սգի օր է և ոչ թափորի, կրքերը դեռ չեն հանգստացած մեծապէս ՀԱՍԱԾ թուրքերի մէջ, թափորի ժամանակ խելագարի մէկը մի բան կըսարքէ, ու նորից կըսրսրուի արիւնհեղութիւնը, աւելի լաւ է՝ յետաձգել մի առ ժամանակ։

Այսպէս որոշուեց այն յուսով, որ որոշ ժամանակից յետոյ

ՀԱՅ. ՀԱՅ. ՀՐԱՏԱՐԱԿ. Գլ. Գրադարան ՀՍՍՀ-ՍՍՀ

կը հնանայ խնդիրը, և թափորի հարցն ինքն իրան կը լուծուի։ Մի քանի հոգի վեր կացան, ուղևորվեցին դէպի գեներալը, ժողովի ցանկութիւնը յայտնելու համար։ Արդէն ուշ գիշեր էր, որ նրանցից մէկը եկաւ յայտնելու, թէ ինչով է վերջացել միսսիան։

—Վաղը թափոր պէտք է լինի. էլ ոչ մի խօսք.—ասել էր գեներալը և ոտը դեռին զարկել։

Հետևեալ օրը, Օգոստոսի 1-ին հայ ականաւորներից մի քանի հոգի հաւաքուեցին գեներալ-նահանգապետի դռան առաջ. դուրս եկաւ և նահանգապետը. եկան զօրքերը և նրանց կալանաւորների նման շրջապատած՝ տարան դէպի Թրքական թաղը։ Հայերը դողդողալով, բոպէ առ բոպէ սպասում էին, որ ահա անգութ պրովակացիան կը գործէ, թափորի գնացող հայերը վտանգի կ'ենթարկուեն և Շուշին նորից արեան ասպարէզ կը դառնայ։ Բայց, բարեբախտաբար՝ ոչինչ տեղի չունեցաւ։ Երկու ժամից յետոյ հայերին միացած՝ Թրքական թաղից վերև բարձրացան բազմաթիւ թուրքեր, ակամայ ժպիտը վշտահար երեսներին։ Անկեղծ ուրախացողների թիւն էլ քիչ չէր. նրանցից մէկը, երբ երաժշտական խումբը նեւագում էր,—պար էր գալիս և կանչում։

—Ա՛յ հայեր, գո՛ւք էլ պարեցէք. որովհետև պարելն աւելի լաւ է, քան լաց լինելը։

Իսկ մի ուրիշը յանդիմանօրէն ասում էր։

—Ձեր տունն Աստուած չը քանդէ, Եապօնի բարութիւնան այստե՞ղ էիք փոխադրել... անաշէններ, ժայռի գլուխը հաւաքուած՝ ուզում էիք անդունդը թափել մեզ, ինչ է։

Խոստովանողներ եղան, որ, եթէ հնար լինէր մի տեղով փախչելու, կուի երրորդ օրն արդէն նրանք կը դատարկէին քաղաքը, բայց տեղ չը կար։ Պատմում էին սարսափելի, ցնցող միջնադէպեր, և հայհոյում, անիծում «սարարին»։

Թափորը վերջացաւ, թուրքերը ցրուեցին հայոց բաղարը, թոփխանան։ Կուի ժամանակ քաղաքը մի քանի տեղերից բաց էր հայերի համար, և ամեն կողմերից բերել, քաղաքը լցրել էին տեսակ-տեսակ մրգեղէններով ու կանաչեղէններով։ Թուրքերը գնացին, կրպանները ու թաշկինակները լցրին, մէկը մինչև անգամ փափախն էլ լցրեց, որովհետև իրանց թաղը ոչինչ չէր մտել, և քաղցր, ըստ երևոյթին անկեղծ զրոյցներով՝ ցրուեցին դէպի իրանց թաղերը։

Օգոստոսի 1-ից ընկաւ համեմատական խաղաղութիւնը, թէև փոխադարձ անվստահութիւնը դեռ տիրում էր երկու կողմերումն էլ։ Բայց շատ, շատ էին յոգնած, քայքայուած, ուժասպառ եղած և սպանութիւնները ծայրերումն անգամ պակասեցին, շատ տեղերում նոյն իսկ վերացան, և հայ-Թրքական ընդհարումներին՝ բաղձալի վերջակէտը դրուեց։

III.

ՍՈՎ

Հայ և թուրք ժողովուրդները տնտեսական մի այնպիսի սոսկալի հարուած կրեցին ընդհարումներից, որ տասնեակ տարիներ յետոյ միայն գուցէ նախկին դրութեանը հասնել կարողանան։ Միմիանց ոչնչացնելու պատրաստութիւններն ահագին գումարներ կլանեցին երկու կողմերից։ Եթէ միջին թիւ վերցնենք, ապա սխալուած չենք լինի, եթէ ասենք, որ իւրաքանչիւրը առնուազն տասն հազար բուբլի է ծախսել «պատերազմական» կարիքների համար և ծուխ դարձնելով՝ բաց թողել օդի մէջ։

1905 թուականի Յունիսին կարկուտը եկաւ և ոչնչացրեց Խաչէնի, Վարանդայի հայ, և Աղդամից վեր գտնուող թուրք գիւղերի արտերը. յոյս կար, որ էլի մի բան կըստացուէր ծեծուած արտերից բայց երկրորդ անգամ էլ վրայ հասաւ կարկուտն աւելի ուժեղ, աւելի անողորմ, քան առաջինը, և այս անգամ արտերի տեղն էլ բան չմնաց, բացի յարդ դարձած ցողուններից։ Օգոստոսին սկսեցին արիւնհեղութիւնները. կորցրեցին հաղորդակցութեան բոլոր միջոցները. գիւղացիք խոփը թողած՝ հրացանն ուսին զինուորներ էին դարձել, և աշնանացան չեղան շատ տեղեր։ Ընդհարումները շարունակուեցին 906-ին, ու գարնանացանն էլ չեղաւ գրեթէ ոչ մի տեղ, ժանաւանդ որ սերմացու չկար։ Շատ տեղեր էլ կարկտից արտերն անհնձել մնացին. օրինակ Աւդալ-Գիլաֆլուն չկարողացաւ իւր արտերը հնձել. Աշաղա, Օրթա և Իլխարի Գիւնէյֆանները՝ նոյնպէս. իսկ Թրքական հողերում հայերի ցանած արտերն այնպէս էլ մնացին, առանց իրանց տիրոջ երեսը տեսնելու։ Այդ դեռ ցաւի կէսն է.—հայ և թուրք սահմաններում գտնուող բոլոր հողերը մնացին խոպան, գութանի կարօտ։ Վարանդայի

Նախիջևանիկ գիւղը 1906-ի աշնանը իւր հողերի կէսն է ցանել, Փիրջամալը՝ նոյնպէս Վարազաբոյնը՝ քառորդը, Ամարասի բարեբեր ընդարձակ հողերի ամենաշնչին մասը, Աւդալ Գիլաֆլուն՝ հազիւ 1/5-ը, Հագուզը, Վէյսալլուն՝ նոյնպէս և այլն։ Աղդամի շուրջը փռուած տասնեակ հազարաւոր դեսիատին խաղողի ու թթի այգիները թուրքերին այլ ևս օգուտ չէին բերում, որովհետև այնտեղ գտնուող միակ հայ գործարանները—Խուրլարեան Ահարոնեան, Սողոմոնով և այլն,—վառուած էին, իսկ թուրքերն արաղ կամ գինի պատրաստել իրանց խաղողից և շուկայ հանել չեն կարող։

Եւ այսպէս սնանկացաւ, ողորմութիւն աղերսելու դուռը հասաւ նոր-նոր տնտեսական բարօրութեան հասած գիւղացիութիւնը. ցորենին փոխարինեց շատ տեղերում՝ կորեկը. կորեկն էլ պակասեց. լաւ է, որ գետնախնձոր շատ էր ցանուած մի քանի տեղերում. սկսեցին գետնախնձորից օգտուել։

Իմ աչքերովս եմ տեսել. մի գիւղում, խրճթի սրահում սաջը դրած է կրակին, երեք երեխաներ շուրջը նստած, իսկ մայրը եփած ու մանրած գետնախնձորի հետ խառնել է կորեկ ալիւրը, հաց շինել գցել սաջին, և երկու ձեռները հացի վրայ դրել, որպէսզի ցրիւ չըգայ։ Շատ ընտանիքներ այդպէս են ապրել։ Բայց ոչինչ, գովելի առկունութեամբ դիմանում էր գիւղացին.—գարունը կըգայ, բուսեղէնները կ'առատանան, եօլա կը գնան, մինչև եղած արտերը կը հասնեն.—այդպէս էին մտածում նրանք։

Արդ՝ այս տեսակ պայմաններում կարելի էր, հնարաւորութիւն կա՞ր արդեօք, այդպիսիներից հարկ, տուգանք հաւաքելու։ Այո, մեր կառավարութիւնն ունէր այդ հնարաւորութիւնը, և գործադրում էր անգթօրէն։ Բեաթուկ, Նախիջևանիկ, Փիրջամալ, Վարազաբոյն Նոր-Շէն, Ղզղալա, Աւդուռ, Միրուշէն, և այլն՝ հազարներով են տուգանք տուել... հապա սովորական հարկն ու միւս տուրքերը, որ կանոնաւորութեամբ հաւաքւել են... էլ հալ կը մնար գիւղերում։

Եւ հեծում է գիւղացիութիւնը։ Բայց ինչ կը լինի նրա դրութիւնը, եթէ նորանոր դժբախտ պատահարներ թափուին նրա գլխին...։

IV.

. . . . . .
. . . . . .
. . . . . .

V.

. . . . . .
. . . . . .
. . . . . .

VI.

«ՄԻՋՈՑՆԵՐ ԵՆ ՁԵՌՔ ԱՌՆԻԱԾ»

Նորից և նորից կրկնում ենք. եթէ Բագւայ կոտորածը տեղն ու տեղը խեղդէր, և յանցաւորները պատիժ ստանային, կառավարութիւնը ցոյց տար որ ոչ մի դէպքում ինքն այդ տեսակ գազանութիւնների համբերել չի կարող, ապա հայ-թրքական ընդհարումներն այսպիսի սոսկալի կերպարանք չէին ստանայ։

Երբ Փետրուարեան սարսափները տեղի ունեցան, պաշտօնական «Кавказъ» լրագրում այդ մասին տպագրուեց մի պաշտօնական հաղորդագրութիւն, որ վերջանում էր հետևեալ տողերով.—«Բագւում հանգստութիւնը և հասարակական ապահովութիւնը վերականգնելու համար ձեռք են առնուած պէտք եղած միջոցները»։

Տեսնենք այդ ինչ միջոցներ էին, որ «ձեռք էին առնուած»։

Ես խոյս եմ տալիս իմ աչքով տեսածներս ու ականջով լսածներս գրի անցնելու. բայց կըբերեմ ուրիշների գրածներից կտորներ, որոնցով կապացուցի, թէ կառավարութիւնը որքան է տրամադիր եղել խաղաղութիւնը վերականգնելու։

«Բազարնայա փողոցի և հանդիպակաց անկիւնում միջնաքաղաքի պատի մօտ, սպասողական դրութեան մէջ՝ յարձակելու պատրաստ կանգնած էին թուրքերի զինուած խմբեր, իսկ նրանց մէջ տեղ անշարժ, փայտացած կանգնել էր կօզակների շրջուն խումբը. (Бак. Изв. Կոնստ. Պոնոմ.)։

«Կօզակների պիկէտի մօտով վազում են մի խումբ թուրքեր, բէրդանկաներն ու ատրճանակներն օդում շարժելով...։ Նրանք վազում են Նիկոլաևսկայով և ծածկւում Բազարնայա փողոցում... մի բոպէ էլ... Զալպ... և աններդաշնակ աղաղակ՝ «ու-

ռա»... Ահա ձախ կողմից էլ որոշեց զինված ամբոխ, հաւասարեց կոզակների բազեզդին. .: Ես տեսնում եմ, ինչպէս նրանք բոպէաչափ կանգնեցին կոզակների մօտ, ըստ երևոյթին՝ զրոյց էին անում» (Бак. Изв. Կոնստ. Պօնսմ.):

«Ամբոխն սկեց ցրուել, աջ ձեռքում բռնած փայլուն ատրճանակներ, իսկ ձախում թալանած մահուդ, կօշիկներ և այլն: Այդ կողոպտողներին հանդիպող զինուորների խմբերը անցնում էին մօտներով, չբխլելով նրանց ոչ զէնքերը, ոչ էլ թալանած ապրանքը (Нов. Об. Օրէստ Ս.):

«Бак. Изв.» № 22-ում, ըստ տեղեկագրի 3-րդ քաղաքամասի պրիստավի, տպագրված է, որ ա. Կանիթափայում գտնուող Աղամօվի տունը թալանուել է և բնակիչները կոտորուել են գիշերուայ ժամը 11-ին. մինչդեռ այդ բոլորը կատարուել է անցնող կոզակների աչքի առաջ, առաւօտեան ժամը 9-ին» (Бак. Изв. Աղամօվի ազգական):

«Ժամը 2-ին մօտ, Բազարնայեա փողոցով զինուորների հետ անցնելիս՝ ես պատահեցի Թուրքերի խմբի, որ թալանում էր Աղիատսկի փողոցի անկիւնում գտնուող ճոթեղէնի խանութը, և այդտեղ էլ տեսայ 2-րդ քաղաքամասի պրիստաւին մի քանի գաբադավօյների հետ, թալանուող խանութի մօտ: Իմ յանդիմանանքիս, թէ ինչու նա կողոպտողների դէմ միջոցներ չի ձեռք առնում, պատասխանեց, որ բաւականաչափ ոյժ չունի. իսկ երբ ես խնդրեցի թոյլ տալ ինձ այդ դէպքում կրակ բաց անել, պրիստաւից մերժումն ստացայ». (Бак. Изв. Կապիտան Բախտաւօվ):

«Ոստիկանութիւնը կատարեալ ձեռնպահութիւն էր ցոյց տալիս, երբ կոտորում էին հայերին, և եռանդ էր ցոյց տալիս, երբ հարկաւոր էր լինում հայերին զինաթափ անելու: Այդ դէպքում ոստիկանութիւնը և՛ բաւականաչափ ուժեղ էր գտնուում և բաւականաչափ բազմաթիւ... Զինուորները կանգնած էին սովորական հանդիսատեսների նման, և միայն ժամանակ առ ժամանակ խլում էին պաշտպանուող հայերի զէնքերը» («Русскія Вѣдом.»).

«Ճանապարհին մեզ պատահեցին այն երկու հայերի դիակները, որոնք դուրս թռան Շամախու ճանապարհին կողոպտուող տնից և ուզեցին ազատուել կոզակների ձիերի ոտների արանքում: Կոզակները քշեցին ձիերը, հեռացան, և այդ հայերին պատառ-պատառ արաւ կատաղած ամբոխը» (Нов. Обоз. Օրէստ Ս.):

«Փաստեր, որոնք պատասխան են պահանջում. 1) ո՞վ է Բագուում հազարաւոր ամբոխին մեր պատերազմական ձևի հրացաններ տուել. ախը իւրաքանչիւր Թուրք իւր ձեռքին Բէրդան և Սմիթ-վէսսօնի ատրճանակ ունէր. 2) Երբ Աղամօվի տունն այրուում էր Թուրքերի գցած հրդեհից, ինչո՞ւ հրդեհաշէջները չերեւացին. 3) Որտեղից էին Թուրքերն այնքան շատ փամփուշտ ձեռք բերել, որ շատ անգամ զուր տեղից հարիւրներով արձակում էին. 4) Ինչո՞ւ իւրաքանչիւր առաւօտ Թուրքերը հաւաքւում էին ուշաստօկ և յետոյ ցրւում քաղաք» (Тиф.).

Բայց ի՞նչ ենք սկսել. այս տեսակ վկայութիւններ հարիւրներով կարելի է բերել. բերածներս էլ բաւական են ցոյց տալու համար, թէ՝ կառավարութիւնն ինչ տեսակ միջոցներ էր ձեռք առել՝ բաշիբոզուքներին վերջ դնելու: Այնն տեղ թալանողներն ազատ-հաւարձակ, հրացանն ուսին, ատրճանակը ձեռքին, խփում սպանում էին, տներ հրդեհում, խանութներ կողոպտում, և նրանց երեսին ժպտում էին. էլ հարկ կա՞յ հարցնելու, թէ ինչու կոտորածները ծաւալուեցին ամեն կողմերում, ինչու Շուշին աւերւած է, Զանգեզուրը սոված, Վարանդան պղծած... այսպէս են ցանկացել չար մարդիկ, այդպէս են ծրագրել, և իրանց նպատակին յաջողութեամբ հասան: Կազմակերպված ոճրագործութիւնը իւր հաշիւը տեսաւ, սակայն գիտակցութեան է գալիս, արթնանում է ժողովուրդը, և իւր թշնամուն արդէն ճանաչում է, և... վա՜յ թշնամուն:

—

Ես վերջացրի, տալով հայ-թրքական ընդհարման, այդ մեծ ողբերգութեան կսմախքը միայն. դրանից դէնը գնալ չէի կարողերևի աւելի բարեպատեհ հանգամանքներում հնարաւորութիւն կունենանք նրա ամբողջութիւնը ներկայացնելու իւր բոլոր մանրամասնութիւններով ու կողմերով, կամ գուցէ այդ կանեն աւելի հմուտ և ձեռնհաս մարդիկ այն էլ բաւական է, եթէ սրանով կարողացայ հայ-թրքական ընդհարումների մի չբծոտարկված էջը ներկայացնելու:

Այժմ, թէկուզ ամենափոքր չափով մի ամբողջական պատկեր տալու համար՝ կուզէի մի քանի գլուխ ևս աւելացնել, Հ. Յ. Դաշնակ. դերը պարզելու՝ ինքնապաշտպանութեան գործում:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

I.

Դաշնակցութիւնը իւր տասնեակ տարիների ընթացքում փորձած, եփած ուժերով՝ մի զարմանալի հմտութիւն ցոյց տ�։ ինքնապաշտպանութեան գործում, մի տենդոտ ճիգով նա փրկեց ժողովրդին։

«Փրկեց» բառը թող խորթ չհնչէ. ես իսկական անունն եմ տալիս։

Ո՞վ չէ ճանաչում մեր ժողովրդին։ Տարիներ առաջ՝ «Մշակ» լրագրում մի լուր եմ կարդացել, որի բովանդակութիւնը հետևեալն է.—Մաղաւուզ գիւղում մի մեծ հոր կայ, բերանը լայն բացուած. գիւղացիներից մէկի տավարն է ընկնում մէջը, ոտը կոտրում. միւսի գոմէշը՝ մէջքը ջարդում, երրորդի հորթը, և այլն. և ոչ ոք չի գնում այդ հորը լցնում, կամ բերանը պինդ ծածկում դժբախտութիւններին վերջ տալու համար.—ինչո՞ւ գնամ,—ասում է նրանցից իւրաքանչիւրը.—հոր քանդողի հէրն անիծած. ով քանդել է թող նա լցնէ։ Եւ հորը մնում է բաց, նոր ոտներ ջարդելու համար։

Մաղալուզի այդ դէպքը հեշտութեամբ կարելի էր մի երկու տարի առաջ ընդհանրացնել բոլոր հայ գիւղերի վերաբերմամբ. ընդհանուր ուժերով ժողովրդին սպառնացող աղէտի առաջն առնելու գիտակցութիւնը երաշ է եղել նրա համար։ Մի հասարակ կամուրջ, ջրի համար մի փայտէ աւազան, մի որ և է փլուածք շինելը, միշտ մի բարեգործ ձեռքի է սպասելիս եղել։ Անվերջ օրինակներ կարելի էր բերել, որ աւազակները եկել, մէկի տունը թալանել են, նոյն իսկ մարդ սպանել, և տանը պատին կպած հարևաններն օգնութեան աղաղակները լսելուց յետոյ էլ՝ չեն դուրս եկել գոնէ աղմուկ բարձրացնելու, աւազակներին շփոթեցնելու։ Ընդհանուր առմամբ՝ այդպէս է եղել մեր գիւղերի դրութիւնը, երբ բացւում հայ-թրքական ընդհարումներն սկսեցին։

Հեռանկարը սարսափելի էր. ինչ պէտք է անէին այդ խեղճ ու կրակ, «վախկոտ» անունն ստացած գիւղացիները, եթէ յանկարծ գաւառներում ևս յարձակումների տուրը բացւէր։ Հայերի

մէջ գոյութիւն ունեցող մարտական ոյժ ներկայացնող Դաշնակցութիւնն էր, որ մտաւ ասպարէզ։

Ինչպէ՞ս կազմակերպուեց ինքնապաշտպանութիւնը.—դժբախտաբար այդ հարցին առայժմ չպիտի կարողանանք պատասխանել. և թող դրանից չեզրակացնեն, թէ մենք խուսափում ենք հասարակութեան առաջ դնելու կազմակերպման գործը. ոչ այդ չէ պատճառը... Ասենք միայն, որ Դաշնակցութեան ներկայացուցիչներն անձնուիրաբար մտան գործի մէջ և խօսքին միացնելով գործը՝ ամբողջ Ղարաբաղից կազմեց մի կուռ, միացած ոյժ՝ զանազան արհաւիրքների դիմագրաւելու կարողութեամբ։ Հանգիստ ու դադար չունեցան այդ պատասխանատու մարդիկ երկու տարուայ ընթացքում։ Հեշտ է ձմեռուայ ցուրտ գիշերներին ձիով, երբեմն էլ ոտով, մինչև ծնկները հասնող ձեան միջից 7-10 վերստ սար ու ձոր անցնել, ստուգելու համար, թէ՝ շրջակայ գիւղերի խմբապետները կատարո՞ւմ են իրանց պարտականութիւնը, պահապանները դիրք են դուրս եկել, արթո՞ն են հսկում։ Այդ անդուլ ջանքերն էին պատճառը, որ պահապանները միշտ իրանց տեղն էին գտնւում, տեղական հերթապահ ուժերը՝ գիւղամիջում պատրաստ, իսկ սուրհանդակները գաւառի մի ծայրից մինչև միւսն անցնելով զանազան ուղղութեամբ՝ ղեկավարներին միշտ իրազեկ էին պահում իրերի դրութեան մասին։ Մի գիւղի սահմանից միւսը մտնելն անհնար էր դարձել, մինչև պայմանական նշանները չէին տրւում. և քիչ չէ պատահել, որ գիշերները գաղտնօրէն դիրքերը կօնտրոլ անելու համար դուրս եկած ղեկավարները կամ զինուորական խմբապետները՝ հրացանաձգութեան էին ենթարկւում պահապանների կողմից։

Ինքնապաշտպանութեան բարդ գործի պատմութիւնը մի զարմանալի էջ է հայկական կեանքում։ Ղեկավարները, որ ընկզբում այնքան կասկածով էին մօտենում հայ գիւղացիութեան, մի երկու ամսից յետոյ միանգամայն անհիմն գտան իրանց կասկածները, չհաշուած բազմաթիւ խոշնդոտները, որ գրեթէ ամեն գիւղում յարուցանում էին որոշ դասակարգի մարդկանց կողմից, ինքը, ժողովուրդն, ընդհանրապէս՝ ընդառաջ գնաց ղեկավարների ցանկութեան և կազմակերպելու մի հիանալի կորով ցոյց տուաւ, բնազդմամբ Դաշնակցութեան դրօշակին ապաւինելով։ Հին հայդուկների և կամաւորների թուցիկ-ձիաւոր խմբերը

գիւղէ-գիւղ անցնելով՝ յոյս ու հաւատ էին ներշնչում դէպի Դաշնակցութիւնը, և ժողովուրդը պատկառանք էր զգում, երբ իւր աչքերով տեսնում էր, թէ իրանց արիւնը ծծող, իրանց գլխին թագաւորութիւն անող տեղական հրէշներն ինչպէս են ծակերը մտել կազմակերպչական գրոհից։

Ընդհարումների սկզբի օրերում գիւղացիութիւնն զգալի չափով վարանոտութիւն ցոյց տուաւ. շատ տեղեր նոյն իսկ յուսահատական բացականչութիւններ եղան, թէ մենք ինչպէս կարող ենք դիմադրել Թուրքերին. նրանց մէջ դեռ արմատացած էր այն նախապաշարմունքը, որ հայը պաշտպանուել երբէք չի կարող, այլ նա ստեղծուած է միայն ծեծուելու, թալանուելու համար։ Մի երկու տեղ մինչև անգամ տրամադրուել էին գիւղերը դատարկել, անցնել դէպի Շուշի, կամ աւելի «ապահով» տեղեր, չնայելով՝ որ ղեկավարները դրսից ուժեր էին հասցրել վտանգուած կէտերին։ Բայց երբ առաջին կռիւներում փորձուած ղեկավարները, կռուում բռնուած հայդուկներն ու տեղական կորիճ կամաւորները մի առանձին յաջողութեամբ յետ մղեցին յարձակումներն, այն ժամանակ ինքնապաշտպանութեան ոգին բարձրացաւ ժողովրդի մէջ և նրանց այլևս ճանաչել չէր կարելի. կարծես դարերով կորցրած քաջութիւնն այժմ ի մի հաւաքուած՝ հանդէս էր դուրս գալիս։

Կազմակերպողների հաւար ներքին խոչընդոտները ոչինչ. կառավարութեան հալածանքներն էին, որ վերջ չէին ստանում. գիւղեր շրջապատել, սպառնալիքներ կարդալ, 48 ժամուայ մէջ «խռովարարներ» պահանջել, բայց և ոչ մի անգամ օգնութիւն չը հասցնել այս կամ այն տեղին...։ Այդ միջոցներում էր, որ օֆիցէրի ու կօզակների հետ մի «նշանաւոր» հայ գիւղերը մտաւ ու սկսեց հայհոյել դաշնակցականներին ու քարոզել, որ նրանց դուրս քշեն իրանց միջից։

Հալածողները բազմաթիւ անգամ, գիւղերը պատելուց Թուրքերին են իրանց առաջնորդ վերցրել։ Նախիջևանիկ մտաւ Թուրքի առաջնորդութեամբ, Փիրջամալ մտան ու խուզարկութիւն արին Թուրքի առաջնորդութեամբ ու ցուցմունքներով. Հարաւ՝ նոյնպէս. Նինգի՝ նոյնպէս. Սօս՝ նոյնպէս. և այլն և, այլն։ Ահա այդ հանգամանքն էր, որ գիւղացիների մէջ անվստահութիւն էր զարգացնում դէպի կառավարութիւնը, թէ այստեղ մի խորհրդաւոր

բան կայ հթէ «իրանց գործիչներին» շատ անգամ աւազակ, նոյն իսկ ձեռները հայի արեան մէջ շաղախուած Թուրքերի առաջնորդութեամբ ու ցուցմունքներով են ուզում բռնել։ Այդ պատճառով նրանք աւելի էին գաղտնապահ դառնում, աւելի ձգտումներ ցոյց տալիս կազմակերպուելու։ Կազմակերպելու գործը երբեմն վտանգի էր ենթարկուում և գիւղերից ծնուած հրէշների ձեռքով գաղտնի դաւադրութիւններ ու մատնութիւններ—երբեմն ծանր հետևանքներով—նրանց գարշելի ձեռներով էին կատարուում, որովհետև այլևս մաշկել կեղեքել չէին կարողանում։

Ծանր, աննպաստ պայմաններում է տարել Դաշնակցութիւնը ինքնապաշտպանութեան կազմակերպելը։

II.

Ընդհարումների վերջին շրջանում և ընդհարումներից յետոյ էր, որ մամուլի մէջ արշաւանք սկսուեց Դաշնակցութեան դէմ՝ ինքնապաշտպանութեան հողի վրայ. յարձակողները կրքով դուրս եկան բանակուի, և միանգամայն ուրանալով հակառակորդի առաւելութիւնները, չափազանցրին պակասութիւնները. ապա սկսեցին հայհոյանքների մի անվերջ շարան Դաշնակցութեան հասցէին. և որովհետև այդ յարձակումները շատ անգամ անտեղի ու անարդար էին, իսկ շատ անգամ էլ կատարուում էին այնպիսի մարդկանց ձեռքով, որ սրի ու կրակի օրերում մատ-մատի չէին տուել, հասարակական գործունէութեան մէջ այնքան էին փայլել, ինչքան լուսատտնիկը՝ խաւարում, և այժմ իրաւունք էին համարում ցեխեր շպրտել դէպի ամեն կողմ, ուստի բանակուիը բորբոքուեց և՝ հակառակ կողմից, ու քուլքլոցներն անվերջ եղան։

Մի բան միայն երբէք ներելի չէ մեր հակառակորդներին. նրանք իրանց յարձակումների մէջ այնքան տարուեցան, որ ամբողջ Դաշնակցութիւնը աւազակների ընկերակցութիւն, իսկ դաշնակցականներին՝ ղուլդուր, սրիկայ, պրօվակատօր, բուրժուաների պաշտպան, բաշիբուզուկ անուանեցին, ասացին, որ Դաշնակցութիւնը կեղեքում է ժողովուրդին, նա ամեն բան արել է մնում է միայն՝ որ խուլիգանական պագրօմներ սարքէ...։ Այդ թունալից, կրքոտ հայհոյանքներն՝ ինքն ըստ ինքեան՝ զայրոյթ յառաջացրին

դաշնակցականների մէջ և նրանք էլ կորցրին իրանց սառնասրտութիւնը, ու պատասխանեցին կրքոտ խօսքերով։

Պէտք է ասել, որ նախ քան մամուլի ձայն բարձրացնելը՝ Դաշնակցութեան դէմ տրտունջ ու բողոք կար որոշ դասակարգի մէջ. իզուր են աքնում հաստատելու, որ ոչ ոք չի կարողացել մի որ և է դաշնակցականի «թանին թթու» ասել. այդ մեղադրանքն անարդար է. ամենակտրական կերպով կարող ենք ասել, որ ընդհակառակը պէտք եղածից շատ աւելի են եղել «թանին թթու ասողները». և գիտակից, իսկական դաշնակցականը ոչ մի դէպքում չի խեղդել այդպիսիների ձայնը, այլ վիճել է աշխատելով իւրն ապացուցելու։ Ո՛չ դաշնակցական բողոքող տարրի մէջ եղել են մարդիկ, որ ամենայն բարեխղճութեամբ՝ մեր պակասութիւններն են պախարակել, և մենք շնորհակալութեամբ՝ օգտուել ենք նրանցից։ Բայց ինչպէ՞ս շնորհակալութիւն յայտնէինք նրանց, որոնք յարձակւում էին, միմիայն յարձակելու համար, առանց մինչև անգամ հաշիւ տալու՝ թէ ինչ են անում, ինչ են խօսում։

Շատերից՝ մի նմուշ։ Օգոստոսեան սարսափներից յետոյ էր, կարծեմ՝ Հոկտեմբերի սկզբներին. ինչ-որ խնդիրներ լուծելու համար, գաւառներից Շուշի էին հաւաքւել Դաշնակցութեան ներկայացուցիչներն ու Շուշայ առաջաւոր մարդիկ՝ տեղւոյն դաշնակցական մարմնի ներկայացուցիչների հետ։ Եւ սկսուեց խորհրդակցութիւնը։ Սկզբում դեռ ոչինչ նկատելի չէր. բայց կէս ժամ չանցած՝ երևան ելաւ շուշեցի առաջաւորների մի մասի տրամադրութիւնը, և նրանք աջից ու ձախից սկսեցին ոչ խնդրին վերաբերող, իրանց յարձակումները։ Նրանցից մէկը, մի բարձրագոյն կրթութեան տէր մարդ, յանկարծ կանգնեց և... ինչ ասաց։

—Պարոններ,—ասաց նա,—Շուշայ 300 վառուած տների ամբողջ յանցանքն ընկնում է Դաշնակցութեան վրայ։ Մ՞թէ՞ այդ կուսակցութիւնը չէր իմանում, որ կռիւների ժամանակ կարող է հրդեհ ևս ծագել, ինչո՞ւ չի վաղօրօք ջրմաղ մեքենաներ բերել տալ, հրդեհը հանգցնելու։

Եւ նրան ձայնակցողներ ևս գտնուեցին...։ Մինչդեռ Շուշին դեռ տարիներով քաղաքային դուռա էր ունեցել, և տարիների ընթացքում չէր կարողացել ջրմաղների տէր դառնալ։

Մամուլի մէջ եղած մեղադրանքները ևս, ինքնապաշտպանութեան հողի վրայ վերև բերած օրինակիս նման անտեղի, և

զրպարտութիւններ են եղել, և մաղձոտ արշաւանքի ժամանակ չափ ու սահման անց կացրած։

«Ղուլդուր», «սրիկայ», «պրօվակատօր», «բուրժուաների պաշտպան»... էլ թթու ու կծու հանոյանք չմնաց, որ չթափէին Դաշնակցութեան հասցէին. և այդ բոլորը նրանք ասում էին առանց խղճի խայթ զգալու, առանց ամաչելու։ Սակայն այն բոպէին, երբ նրանք պաստառած սենեակում, մահուդազարդ սեղանի վրայ «ղուլդուր» բառի գիւտն էին անում հասարակութեանը մատուցանելու, մենք տեսնում էինք այդ դաշնակցական «ղուլդուր» զինուորին. նա ընկած էր Ասկերանի մօտ, Նախիջևանիկի կողքին... նա դուրս էր եկել իւր ընկերների հետ հայ գիւղացու ինչքն ու գոյքը, ընտանիքի պատիւը պահպանելու. բայց գնդակը մեր աչքի առաջ նրան գլորեց, և նրա ջիգեարը տարան թուրքերը, նախօրօք դեռ թրթռացող կուրծքը պատռելով... Այն բոպէին, երբ մի սրտառուչ համերաշխութեամբ «բուրժուաների պաշտպան» բառերն էին թնդեցնում քաղաքների զարդարուն տներում, մենք տեսնում էինք այդ «բուրժուաների պաշտպան» դաշնակցականին... դեռ երէկ նա տեսել էր արիւնազանգ օրօրոցը, հայ գեղջուկի մանուկն էր խողխողւել, և այսօր դուրս էր եկել մնացած մանուկների կեանքը իւր գնդակներին ապաւինելու. բայց նա թողել է իւր կինն ու երեխաները, իսկ ինքն ընկած է Գիլաֆլուի կողքին և շրթունքները մրմնջում են վերջին բառերը.—Ոչինչ, մի վախենաք, գիւղը պաշտպանեցէք...», Այն բոպէին... բայց՝ բաւական է... Մարգարը, Արտէմը, Ռուբէնը... դրանք «պրավակատօրնե՞ր», դրանք «ղուլդուրնե՞ր»... բաւական է. Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւնն արիւնով է կաղապարած, և մերկ, արիւնոտ փաստեր շատ ու շատ կարելի է առաջ բերել։

«Դաշնակցութիւնը կեղեքել է ժողովրդին...». ո՛, ինչքան են սիրում նրանք հայ ժողովրդին, երբ առաւօտեան չայն ու զակուսկին էին անուշ անում, կէսօրին՝ համադամ խորտիկներ, իսկ երեկոները... Այո, շատ էին սիրում «թշուառ» «տգէտ», «կեղեքւող» ժողովրդին, երբ բոլոր յարմարութիւններն ունէին իրանց պատուական գլուխներն ազատելու այն գնդակների տարափից, որ թափւում էր «ղուլդուրների գլխին. շատ էին սիրում ժողովրդին, երբ իրանց ստամոքսն ազատ է եղել կորեկ հացի այն տանջանք-

ներից, որ «բուրժուաների պաշտպան» դաշնակցականների կ-
կորդը խազխզելով էր ցած իջնում...

«Ժողովուրդն ինքն է իրան պաշտպանել». աղաղակում էին
Դաշնակցութիւնը հայհոյողները, և յաղթութիւնը տարած ըմբիշի
նման մի ոտ առաջ դնելով՝ «մեանա բիրդանիմ» գոռում։ Բայց ո՞վ
ասաց այդ փիլիսոփաներին, թէ ժողովուրդը չէ իրան պաշ-
պանել. փառք նրան, մեր ժողովրդին. նա դեռ կապրէ, որովհե-
տև մենք տեսանք, թէ նրա կռացած մէջքն ինչպէս դքւեց, և
նրա ճակատի խորշումներն ինչպէս չքացան, երբ կեանքի ու
մահու խնդիրն էր պարզուած նրանց համար։ Դաշնակցութիւնը
տեսաւ այդ՝ իւր սեպհական աչքերով. բայց նրա հակառակորդ-
ներն էլ տեսան... ոչ։ Որտեղ էին նրանք, երբ դաշնակցական
անձնուրաց գործիչները գիւղական խրճթներում միջատների
անխնայ արշաւանքներին հնթարկուած՝ անքուն, անձրևի ու ցե-
խի բարիքները վայելելով՝ շարունակ կրկնում էին.—ժողովուրդ,
դքացրու մէջքդ, կուրծքդ ուղղիր, ճանաչիր իրաւունքդ, և կազ-
մակերպւելով՝ յետ մղիր քեզ համար նիւթուղ նենգ հարուածնե-
րը»։ Որտեղ էին, երբ դաշնակցական շրջիկները Զագարում,
Դիլաղարդում և այլն, համերաշխութեան գաղափարն էին քա-
րոզում թուրքերի մէջ, նոր դաւանանքներ սերմում այնտեղ,
պատրաստուող պրօվակացիան տեսնելու համար՝ նրանց աչքերը
բաց անում և այնքան սիրում, որ թուրքերը բազմաթիւ ձիա-
ւորներով են նրանց անց կացնում, խնդրելով յաճախ այցելել ու
խօսել այնտեղ. որտեղ էին, երբ դաշնակցական մարդիկ յա-
բաբերութեան մէջ էին մտել Աղդամի մի քանի աղդեցիկների
հետ, խնդրելով զգուշացնել թուրք ժողովրդին պրօվակացիայի,
դաւադիրների գործիք չդառնալ. որտեղ էին, երբ երկրորդ ընդ-
հարման մղձաւաջը վերացնելու ցաւով տոգորուած Դաշնակ-
ցութիւնը Վարանդայի բազմաթիւ գիւղերում հայ և թուրք հա-
սարակութեան առաջ գլուխ էր տրաքեցնում, բառերի պաշարն
սպառում, որ վերջ տրւի այն խայտառակ, եղբայրասպան կռուին,
այն աննպատակ արիւնհեղութեանը. որտեղ էին, երբ սարսա-
փած ժողովրդին սիրտ էր տրւում, ո՞վ էր նրանց խրախուսողը,
նրանց արտասուքը սրբողը, նրանց վէրքերը կապողը... Դաշնակ-
ցութիւնը քաշքշողները տեսնել էին այդ. ոչ, նրանք ոչ այդ բո-
լորը, և ոչ էլ դրանից յետոյ եղածները տեսան, որովհետև շատ

էին հեռու ժողովրդից, և միայն զբաղուած էին արիւնը զոհաբե-
րող Դաշնակցութեան համար ածականներ որոնելով։

Եթէ նրանք իսկապէս սիրում էին ժողովրդին, հապա ինչ-
ո՞ւ էին ծակուծուկերը մտել, ինչո՞ւ չէին ժողովրդի մէջ մտնում,
նրա փշրուած սիրտն ամոքում, ցաւերը դարմանում, ժողովրդան
ինքնապաշտպանութիւնը կազմակերպում, նրա աչքերի թանձր մառա-
խուղը ցրւում, ե՞րբ նրանք ժողովրդին մի անգամ գոնէ—ջանս
ձեզ մատաղ—ասացին և մենք ծիծաղեցինք. նրանցից որի՞ ճակա-
տը ներկւեց յանուն ժողովրդի, և մենք ակնածութեամբ գլուխ
չխոնարհեցինք... Նրանք այդ չարին, իսկ անողներին՝ «աւազակ,
ղուլղուր» անուանեցին։

Միամտութիւն կըլինէր պնդել, որ դաշնակցականների մէջ
չեն եղել մարդիկ, որ Դաշնակցութեան հաւատն ի չարն են գործ
դրել, ծեծել են մարդկանց, փող են կորզել, և այլն. բայց այն
սև ու մթին տարին մի կուսակցութիւնից, որ տնքտնքալով, ա-
ռիւնոտ կրծքով, կուի ասպարէզում մենակ մնացած, իւր բազ-
մատանջ ուսերի վրայ էր քարշ տալիս մի ամբողջ ժողովրդի գո-
յութեան խնդիրը, որի դրօշակի տակ բնազդմամբ, թէ մի տա-
րերային ժամամբ ապաւինել էին հարիւր-հազարաւոր ժողովուրդ,
մի կուսակցութիւն, որ իրերի բարդմամբ ստիպւած էր մի քա-
նի ֆրօնտի (ներսի և դրսի) վրայ կռւելու, կրկնում եմ, մի այդ-
պիսի դրութեան մէջ գտնուող կուսակցութիւնից կարելի՞ էր պա-
հանջել, որ նա շեղումներ չունենայ, որ նրա մէջ եղող բոլոր
անհատները, լինի դա զինուոր, թէ շրջիկ, գիւղացի, թէ գործի
ղեկավար և այլն, այդ բոլորը լինէին մի-մի իդէալներ, մի-մի
սրբութիւններ։ Աշխարհիս երեսին գոյութիւն ունեցող բոլոր
կուսակցութիւնների մէջ կա՞յ այդպիսի մի կատարելատիպ, ձիւ-
նի պէս անբիծ կուսակցութիւն, որի մէջ երբէք եղած չլինին ան-
վայելուչ գործերի մէջ ներկւած մարդիկ։

Արդ՝ ո՞վ էր «ղուլղուրն» ու «սրիկան». նրա՞նք, որ պոռոտա-
խօսութեամբ, անւանարկութիւններով ու հայհոյանքներով էին
ուզում մարդիկ գրաւել ու «Ժողովրդի շահերը պաշտպանել», թէ՞
նրանք, որ գիւղացու խրճթի կողքին այդ պոռոտախօսների փո-
խարէն էլ էին իրանց արիւնը հոսեցնում. ո՞վ էր «ղուլղուրը».
նրա՞նք որ մի թանաքաման թանաքով էին ամբողջ ազգը փրկել,
թէ՞ նրանք որ թանաքի էլ էին կարօտ մնացել, գրքի էլ, լրագրի

էլ որ ամիսը մի անգամ էին արտաքին աշխարհի մասին լուրեր լսում, բայց տանում էին այդ բոլորը, պակասը լրացնելով վիրդացու հետ ունեցած միաք լուսաւորող զրոյցներով, և նրա ցաւերին մասնակցելով ու դարման տանելով։

Եթէ նրանք ժողովրդին սիրում էին այրող սրտով, անկեղծ սիրով և գտնում էին, որ Դաշնակցութիւնը քանդում է իրանց սիրած ժողովրդի տունը, ապա նրանք չըպիտի հանդուրժէին. ամենայն ուժով ամենայն թափով, առանց ուշադրութիւն դարձնելու, ոչ մի խոչընդոտի, նրանք պէտք է մտնէին գաւառներն ու գիւղերը, և՝ կամ ինքնապաշտպանութեան գործը իրանք տանէին, կամ ինքնապաշտպանութեան շարքերը մտնէին ու Դաշնակցութիւնից «բղխող չարիքների» առաջն առնէին։ Այդ է բնական թռիչքը, սիրող սրտի համար. բայց նրանք այդ չարին, այլ շարունակեցին հայհոյանքները. իսկ չարին որովհետև կեղծում էին, «ժողովուրդ» բառը շահագործելով՝ հաշիւ էին մաքրում Դաշնակցութեան հետ։

III.

Դաշնակցականների համար երբէք վիրաւորական չէր լինի, եթէ նրանց հակառակորդները Դաշնակցութեան «պակասութիւններն» այնպիսի եռանդով արձանագրելով ու դատափետելով հանդերձ՝ չուրանային այն անձնազոհութիւնն ու տաժանելի գործունէութիւնը, որ Դաշնակցութիւնն է ցոյց տուել իւր ծագման սկզբից մինչև այսօր։ Բայց երբ տեսնում ես, որ կրքի թափին անձնատուր եղած մարդիկ այնքան են տմարդի դարձել, որ չեն խնայում դիմացինի ամենասուրբը զգացմունքները, որ քեզ աւազակ են անուանում միմիայն նրա համար, որ այս ինչ գիւղում Դաշնակցութեան անունով մարդ է ծեծուել, կամ տուգանքի ենթարկուել, որ քեզ «ղուլդուր» են մկրտում որև է մէկի սխրագործութիւնների պատճառով,—մինչդեռ դու տասնեակ տարիներ ամենավսեմ գաղափարներով ես առաջնորդուել, և յանուն այդ գաղափարի՝ նոյն իսկ ամենաթանկագին ստացուածքդ-կեանքդ նուիրաբերել, այն ժամանակ չես կարող չբացականչել, որ հակառակորդներդ անազնիւ մարդիկ են։

Եթէ, օրինակ, նրանք Դաշնակցութեան ծրագիրը դնէին

իրանց առաջ և կէտ առ կէտ քննադատէին ու աշխատէին ցոյց տալ, որ Դաշնակցութիւնը սխալ հիմքերի վրայ է գործում, մարդիկ միայն շնորհակալութեամբ կըմօտենային այդ ձևի բանակռիւն ու կըվիճէին մաքուր, սկզբունքային բանակռիւով *). բայց երբ սառը, համոզեցուցիչ քննադատութեան փոխարէն, ինքնապաշտպանութեան ժամանակաշրջանից դէպքեր վերցնելով կեղտաջուր են թափում գլխիդ, գոռալով, որ դու միայն դրան ես արժանի, որ քո դրօշակիդ վրայ միայն «թալանն ու սպանութիւնն» է գրուած, այն ժամանակ էլ ի՞նչ բանակռիւ, ի՞նչ գաղափարի վէճ։

Դաշնակցութեան հասցէին անթիւ մեղադրականներ կարդացին.—որ ծեծում են մարդկանց և ծեծը Դաշնակցութեան գործունէութեան ոգին է, սխտեման. որ նա կողոպտում է ժողովրդին. որ նա ժողովրդին աղքատացրել է, և գիւղացիք ստիպուած՝ օտարութեան են դիմում, որ Դաշնակցութիւնը միացրել է ժողովրդի ձեռներէցութեան ոգին, և այլն։ Այդպէ՞ս է արդեօք։

Դաշնակցութեան գործունէութիւնը պէտք է բաժանել երկու ժամանակաշրջանի,—Տաճկա-Հայաստանի գործունէութիւն և Կովկասեան ինքնապաշտպանութիւն. ամենասաստիկ յարձակումներն ու մեղադրականները վերջին շրջանին են վերաբերում, և մենք կաշխատենք ցոյց տալ, թէ որքան իրաւացի էին մեղադրողները։

Թրքական հարուածը մեր գլխին իջաւ մի այնպիսի բոպէում երբ մենք բոլորովին չէինք սպասում նրանց կողմից։ Թող Դաշնակցութեանը դատապարտեն անհեռատեսութեան մէջ, բայց դա փաստ է, որ առաջին բոպէներում Դաշնակցութիւնը միայն բերանը բաց զարմացել էր և ինքն իրան հարց տալիս.—մի՞թէ սա իրականութիւն է։ Բայց երբ դրութիւնը պարզուեց և յայտնուեց, որ դժբախտաբար երազ չէ այդ, որ հայի գոյութեան խնդիրն իսկապէս վրա տանգուած է Կովկասում, այն ժամանակ միայն սկսուեց մի խելակորոյս, տենդային գործունէութիւն՝ ինքնապաշտպանութեան համար։

Զգիտեմ որտեղ էին գտնուում այժմ աքաղաղացած, յետին թուով խելօք գործեր կատարող «գործիչները», բայց այն ժամանակ ամենավտանգաւոր տեղերում մենք միայն դաշնակցականներին տեսանք, որ գիշերը ցերեկ դարձրած, խելագարուածի նման, յուզմունքից լաց լինելով (շատ փաստեր կան), գիւղ գիւղ էին ընկել, ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու։ Գործը յեղափոխական գործ չէր, այլ զուտ ինքնապաշտպանական. կռիւը տիրող կարգերի դէմ չէր, այլ կեանք ու գոյք ապահովելու համար. որտեղից կարող էիր

*) Պէտք է խոստովանել, որ Ս. Դ. Բ. Հայ կազմակերպութիւնը իւր օրգանով բաւական մաքուր կռիւ է մղել. և դա միակ բացառութիւնն է։

այնքան գործիչներ գտնել, որ բաւարարութիւն տային լայնածաւալ նահանգների բոլոր վտանգած կէտերին։ Եւ ահա ասպարիզի վրայ կանգնած ենք տեսնում իսկական գաղափարական գործիչների հետ և մի շարք ուրիշ «Դաշնակցական գործիչներ».—մէկը քաջ է եղել, բայց աւազակութեամբ պարապող. սրտոտ է, ծակ ու ծուկ իմացող.—առ քեզ մի տասնեակ, այս ինչ ձորը պահպանիր. և նա՝ տասնապետ է։ Մէկը լաւ ձի նստել գիտէ, լաւ նշան խփել է իմանում և հմայք ունի. զինուորները նրա հետ իրանց քաջ են զգում.—առ քեզ այս ինչ շրջանի դիրքերը կառավարիր.—և նա շրջանապետ է։ Մի ուրիշը ժողովրդի հոգեբանութիւնը լաւ ճանաչում է կարողանում է ազդել ու գրաւել նրանց.—գնա այս ինչ շրջանը կազմակերպիր.—բայց Դաշնակցութեան ծրագիրը դեռ չէ կարդացել։ Եւ այլն, և այլն։ Եւ դրանք բոլորը, ըստ Դաշնակցութեան հակառակորդների՝ դաշնակցականներ են, և Դաշնակցութիւնն է պատասխանատու նրանց կատարած բոլոր գործերի համար։

Երկու տարուայ չափ շարունակուեցին ընդհարումները. երկու տարի զինուորական դրութիւն էր, և, այսպէս թէ այնպէս՝ ստեղծուեց զինուորութիւն՝ զինուորական կարգապահութիւն—իւր իսկական իմաստով—մտցնել Ռուսաստանի մէջ, խիստ դժուար է. դուրս սողացին լրբութիւններ, անիրաւութիւններ. և որովհետև մէյդանում միայն Դաշնակցութիւնն էր կանգնած՝ ուստի և այդ բոլոր պակասութիւնները նրա վրին փաթաթեցին։ Ով մի անգամ ազգի անունը տալիս փոշտացել էր, իրաւունք համարեց ազգի անունով արտասուք թափել, նրա վշտերը սգալ և բշտբշտել, թէ քո թշնամիդ Դաշնակցութիւնն է. ով խռոված էր Դաշնակցութիւնից այս կամ այն բանի համար, սկսեց իւր սրտի աղուն թափել թերթերի մէջ, և միշտ մի տեսակ քինախնդրութեամբ լցուած, միշտ կրքոտ, միշտ թունալից։

Դաշնակցութեանը մեղադրեցին, որ ծեծելը նրա սկզբունքն է. բայց մենք ասում ենք, այո, ծեծեր տեղի են ունեցել, բայց ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու ջղային գործունէութեան ժամանակ. ծեծել են այն անհատները, որոնք զանազան միջոցներով աշխատում էին ինքնապաշտպանութիւնը վտանգել։ Ո՞վ է կարող արդարացնել ծեծը. միամտութիւն կըլիներ այդպիսի մի ստոր գործողութեան պաշտպան կանգնել. բայց ամէն մի գաւառում եղող 3—4, կամ հինգ իսկական դաշնակցականները կարող էին տեսնել թէ ինչ է կատարուում գաւառի այս կամ այն ծայրում, իսկոյն և եթ առաջն առնելու համար։ Մէկ էլ, եթէ խաղաղ գործունէութեան ժամանակ լինէր, ծեծը երբէք չէր՝ ներսի գործադրողներին. խօսքը և բարոյական ոյժը պէտք է դրուած լինէր ասպարիզում, մինչև որ երկար-երկար տարիների ընթացքում կարելի լինէր մարդկանց որոշ աշխարհահայեցողութեան, որոշ դաւանանքների տէր դարձնել. իսկ այստեղ ոչ թէ տարիները, այլ օրը, ժամը նշանակութիւն ունէր. պատերազմական դրութեան ժամանակ յանցաւորները, կարգը խանգարողները գնդակահարւում են. իսկ այստեղ՝ դէր-պատերազմական դրութիւն էր, դրա վրայ աւելացած՝ հայի օջախի, կնոջ պատիւը։ Այդ իսկ պատճառով ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու ժամանակ տեղի ունեցած պատիժների մասին մեզք որոշ չափով ներողամտութեամբ ենք մօտենում։

Որո՞նք են ծեծելը։

Օրինակ.—ինքնապաշտպանութեան ղեկավարներն Ա. գիւղում դիրքեր են նշանակել, որտեղ գիշերապահներն անպայման գիշերները պէտք է հսկեն. բայց գիւղի երկու ցեցերը օգտուելով ղեկավարների բացակայութիւնից՝ կանգնում են ու գոռում.—Շունշան որդիք, ի՞նչ գործ ունիք այս ինչ դիրքերում. այստեղ հետև ով որ այնտեղ գնայ, նրա տունը կրակ ենք տալու։ Պահապանները գիւղն են քաշւում. հետևանքն այն է լինում, որ երկու օր յետոյ, թուրքերն առօք-փառօք գիշերը գալիս, գիւղն են մտնում, և միայն Դաշնակցութեան թռուցիկ խմբերն են հասնում ու գիւղը փրկում։ Քննութիւնն ու հասարակութեան միահամուռ բողոքն ապացուցում է գիւղական տղրուկների կատարածը և նրանք ծեծւում են։

Ամենավտանգաւոր տեղերից մէկն է Բ. գիւղը. այնտեղ ինքնապաշտպանութիւնն է կազմակերպւում. բայց երբ ցեցերի մէկից որոշ պարտականութիւններ են պահանջւում, որ նա գիշերները իւր հերթին դիրք դուրս գայ, կամ այլ հասարակական պարտքեր կատարէ, նա իւր վաղեմի դիրքն է յիշում և ձեռքը խանչալին տանում,—ու ծեծում է։

Մի ուրիշ Գ. գիւղում մէկը խոզեր ունի. նա շարունակում է առաջուայ նման հասարակական բողոքն անարգել, և իւր ուժերին վստահ խոզերը բաց թողնել, այգիներն ու արտերը փչացնել։ Չորս անգամ գիւղացիք բազմաթիւ ստորագրութիւններով դիմում են շրջիկին ու միւսներին և չորս անգամ էլ «ականաւորը» նախազգուշացնում է, որ խոզերին կանոնաւոր հսկողութիւն նշանակէ. բայց նա էլի իւր էշն է քշում, և հրացանը վերցրած՝ յարձակւում գիւղացիների վրայ։ Գիւղացիք բարկանում են և կտրական կերպով պահանջ դնում.—կամ իրանք կըյարձակուեն ու խոզերը կըկոտորեն, կամ Դաշնակցութիւնը թող վերջապէս սանձահարէ այդ գիւղական պատուհասին։ Եւ նա ծեծւում է՝ հինգերորդ նախազգուշացումից յետոյ։—Եւ այլն, սրա նման շատ օրինակներ։

Հարց է ծագում, թէ ինչպէ՞ս կըվարուէին Դաշնակցութեան «ազնուասիրտ», «մարդասէր» հակառակորդները, եթէ նոյնանման պայմաններում իրանք լինէին գործելիս, եթէ ներքևում թուրք

ձիաւորների խմբերը լինեն դուրս եկած, իսկ դու գլխիդ այլ-ոցը մեղմելու համար ճակատիդ ձիւն ես կապել. և այստեղ մի քանի սրիկաների պատճառով՝ կազմակերպած մարտիկ խմբերդ են քայքայման վտանգին ենթարկուած։

Այդպիսի պայմաններում առաջացած պակասութիւնները վերցնել ու շտկագործել, մանաւանդ երբ դրանք չեն բղխել զուտ դաշնակցական տրամադրած ոգուց՝ աւելի քան տարդութիւն էր Դաշնակցութիւնը «քննադատողների» կողմից։

Դաշնակցութիւնը մեղադրեցին, որ նա թալանել, կողոպտել է ժողովրդին։

Մտենք Ա. գիւղը։ Մի մերկ գիւղացի է. ասա Սերովբից մի ժամանակ պարտք է վերցրել 53 ր. փող. 12 տարուայ ընթացքում իւր պարտքի դիմաց վճարել է 152 ր. փող. 45 վեղրս գինի, վեց կուժ արաղ, և այժմ նրանից ասան պահանջում է էլի 215 բուբլի։ Դաշնակցութեան ներկայացուցիչը չէ դիցուք, այլ՝ նրա հակառակորդը. ինչ կանէր. չէր ասի.—լիրը, աւազակ,—և մուրհակը պատռելով՝ խփէր գարշելի աղայի դնչին։ Կանէր, անշուշտ կանէր, բայց որովհետև անողը Դաշնակցութիւնն է եղել՝ դրա համար էլ այդ գործողութիւնը «կեղեքումն» կոչեցին։

Մտնենք Բ. գիւղը. հասարակութիւնը լալիս է. գիւղի «պատուելի Մուխանը հարկահանութեան ժամանակ հարիւրներ է իւրացրել. ինքը ոչնչով չի պարապում, ձեռները հողի վրայ չեն կոշտացել, բայց հարուստ է, անւանի, պատուելի, բոլորը դողում են նրանից.—մատս բարձրացնեմ՝ գիւղը պիտի զռայ.—ասում է նա և փափախը ծուռ դրած՝ քէֆեր է անում ամբողջ տարին. չի աշխատում, բայց տարեկան մի անգամ հարկահանութիւն՝ և նա ապահովուած է։ Մի թուղթիկ հայեացք հաշիւների վրայ բաւական է, որ քեզ սարսափների աշխարհում գտնես. այս աստիճանի էլ սրիկայութիւն...։ Չէրն ասի՝ հրէշ, գազան, վերադարձրու հասարակութիւնից ծծածդ փողերը. կասէին, բայց որովհետև ասողը Դաշնակցութիւնն է եղել, բողոքեցին։

Մտնենք Գ. գիւղը. Խոջա-Մակիչը գրանքան 2 կոպէկով աղ ունի առած, բայց ճանապարհները փակել են, և նա օգտուելով հանգամանքից՝ 16 կոպէկով է ծախում. 5 կոպէկով նաւթ է առել, 30 կոպէկով է ծախում. ցորեն ունի, բայց գիւղացիներին չի տալիս.—այնքան պէտք է պահեմ որ մի չուալ ցորենով (7 փութ) այգիդ առնեմ։ Ինչ կանէին, չէրն ասի՝ տզրուկ, ցեց, շահիր, բայց խղճմտանքով, և ոչ թէ մէկին՝ 600—800։—Եւ այսպէս բազմաթիւ օրինակներ։

Դրանք էին կեղեքուածները. եթէ դրանք էին, ապա ճիշտ որ Դաշնակցութիւնը ոչինչ չի խնայել այդպիսիների ծծելու ընդունակութիւնը չափաւորելու համար. այո, նրանք հալածուել են

անողորմ կերպով, նոյն չափով, ինչ չափով որ իրանք էին խեղդամահ արել թշուառ աշխատաւորներին։

Երբ աղքատ գիւղացին դորգը շալակած քաղաք էր շտապում ինքնապաշտպանութեան միջոցներ ձեռք բերելու համար, իսկ տեղական բոլոր ցեցերն ու վաշխառուները իրանց երկյարկանի տներում նստած՝ ոչինչ չէին ուզում անել, դիրքերը դուրս գալ անգամ չեն ցանկանում, որովհետև ցուրտ է, ցեխ է, կըմրսէին, կըկեղտոտուէին... ինչպէս կարող էր Դաշնակցութիւնը լռել։ Գուցէ ժպտացող ու անցնողներ շատ լինէին, բայց Դաշնակցութիւնն այդպէս չարաւ. ամբողջի գոյութեան խնդիրն էր մէջ տեղ. և նա «բռնութեամբ» աղաներին դէպի դաշտ էր քշում, և նա «բռնութեամբ» ստիպում էր սարդերին՝ աղքատների համար ևս հոգալ, նրանց ևս միջոց տալ անհրաժեշտ մթերքներ գնելու։

Եղել են և իսկական կեղեքումներ տեղական խմբապետների ու զինուորների ձեռքով. բայց Դաշնակցութեան իսկական ներկայացուցիչները մի մի հարիւր աչքանի Արգոսներ չէին, որ մի այդպիսի խառն ժամանակ ամեն մի զեղծում տեսնէին. բռնուողները պատժուել են։ Յամենայն դէպս՝ այդ երևոյթներն ընդհանրացնելն անազնուութիւն է, և այդ Դաշնակցութեան մեղը չէ, այլ բոլոր պռոստաֆոսներինը, որ գործից փախած, օրհասական րոպէին ժողովրդին երեսի վրայ էին թողել, և յետոյ միայն դուրս եկել նրա հոգսը քաշելու, նրան «փրկելու» մամուլի էջերում՝ Դաշնակցութիւնը հայհոյելով։

Ամենախայտառակ մեղադրանքը, որ հակառակորդները ցանկացան փաթթել Դաշնակցութեան վրայ, այդ այն էր, որ իբրև թէ այդ կուսակցութիւնն աղքատացրել է ժողովրդին և գիւղացիք ստիպուած՝ օտարութեան են դիմում...։

Շչեդրինի հայ իմաստուն ծանծաղուկները տղմի մէջ խրուած իրանց պաղ ու պղտոր աչքերը շարունակ, խորին իմաստութեամբ այս ու այն կողմ են յուժել, հոտ քաշել օդից, իմանալու համար, թէ որտեղից է վտանգի հոտ գալիս, և ամենախելօք քաղաքականութեամբ գլխնին տղմի մէջ թաղել, եթէ վտանգի ամենաթեթև նշաններն են տեսել։

Բայց երբ վտանգն անցած համարուեց, փոթորիկը կարծես թէ դադարեց, մեր իմաստուն քաղաքագէտ ծանծաղուկները դուրս եկան թագստարանից, «ըմբոստ» ճառեր արտասանելու կառավարութեան—ներողութիւն, նրանք այդքան էլ անխելք չէին,—Դաշնակցութեան դէմ։

Ամեն տեսակ խայտառակութիւն, ամեն տեսակ հայհոյանք կարելի էր սպասել կրքից կուրացածներից, բայց այդ տեսակ մի սոսկալի զրպարտութիւն... երբէք։ Դուրս է գալիս, որ Դաշնակցութիւնը իր զաւակներին կուլ տուող մի Կռոնոս է եղել։ Դաշնակցութիւնը Դալիցինեան ծրագրերի աւելի լայն չափերով իրա-

գործողն է եղել. Դաշնակցութիւնն ու Սուլթան-Համիդը երկուրեակներ են եղել, որովհետև սուլթանը Տաճկա-Հայաստանն է սովի ճիրաններին մատնել, իսկ Դաշնակցութիւնը Կովկասի հայութեանը։

Որքան պէտք է ընկած լինի հակառակորդը, որ նոյն իսկ ընութեան արհաւիրքներն էլ բերէ և իբրև յանցանք՝ դիմացինի վրան բարդէ։ Անատամ չարութեան ծայրակէտն է սա արդէն։ Միթէ այդ դատախազները չգիտէին, որ կարկուտը երկու անգամ եկել ու ոչնչացրել էր արտերը. միթէ չգիտէին, որ դաշտերն անհերկել էին մնացել երկարատև ընդհարումների պատճառով. միթէ չգիտէին, որ կուելու, պաշտպանուելու համար անհրաժեշտ միջոցներ էին հարկաւոր, որ գնդակներն օդից չեն ձուլւում, իսկ մի Յունուարի 6-ի կռիւ՝ 40,000 ռուբլի է նստում։ Գիտէին. բայց Դաշնակցութիւնն է. պէտք է խայթել, պէտք է հարուածել. ու նրանք խայթում էին անօրինակ զրպարտութիւններով, և առանց գիւղի, ժողովրդի երեսը տեսնելու, յայտարարում, թէ ժողովուրդն արդէն երես է դարձրել Դաշնակցութիւնից. բայց այդ միայն իրանց երազած ցանկութիւնն էր։

IV.

Իսկ Դաշնակցութիւնը... սառնասիրտ էր, նա արդեօք, երբ ինքնապաշտպանութեան ժամանակ իրան դաշնակցական համարող հարիւր-հազարաւոր ժողովրդի միջից դուրս էին գալիս մարդիկ, և Դաշնակցութեան անունով՝ զանազան անիրաւութիւններ կատարում։ Ո՛չ, սառնասիրտ չէր։ Մի քանի ամսից յետոյ ինքնապաշտպանութիւնը կազմակերպող դաշնակցականները տեսան այդ բոլորը և պարբերաբար տեղի ունեցող ժողովներում միջոցներ էին մտածում, թէ չարիքի առաջն ինչով կարելի է առնել։ Գրաւոր զեկուցումներ էին գալիս ու գալիս գաւառների ծայրերից. որոնցից մէկի մի կտորն այստեղ առաջ ենք բերում. գրուած է 1905 թ. Օգոստոսի 26-ին, Շուշայ առաջին դէպքերից յետոյ։

... «Մի խօսքով՝ այս տնաւեր հայ-թրքական ընդհարումը և տենդային փութկոտութեամբ կազմւող ինքնապաշտպանութիւնը մեր կուսակցութեան բուն գործերը մեռեալ կէտի վրայ մեխեցին։ Վերահաս վտանգ, կեանքի և մահու խնդիր կայ դրուած սպասարկում. ինքնապաշտպանութեան գործը կլանել է ամենը և ահա դուրս են սողում չարիքներ, որոնց դէմ թերևս կարիք կըզգացւի մոլեգնօրէն մաքառելու»...

... «Ամբողջ X-ն շրջանը դաշնակցական է կոչում իրան. դա ուղղակի մի տարօրինակ երևոյթ է. ինչպէս,—մի ժողովուրդ, որի գիտակցութեան աստիճանը վերջոկներով միայն կարելի է չափել, մի ժողովուրդ, որի համար կատարեալ առեղծուած է մէկն ամենքի, ամենքը մէկի համար ապրելու սկզբունքը,—յանկարծ

նոյն այդ ժողովուրդը մի կարճ ժամանակի ընթացքում իրան Դաշնակցութեան մէջ է համարում և դաշնակցական կոչելու յաւակնութիւն ունի։ Մարդիկ պատրաստ էին Դաշնակցութիւնն ընդունելու, կախարդական մի որևէ այժ կա՞ր այստեղ, արդեօք, որ գաւառանի մի հարուածով տասնեակ հազարաւոր մարդկանց կարողանար մոցնել Դաշնակցութեան վեհ դաղափարների աւազանը...։ Երբեմնեայ տզրուկներն ու վաշխառուներն այժմ իրանց դաշնակցակցն են կարծում. երբեմնեայ աւազակները, ժողովրդի կաշին քերթող կապալառուներն ու խօջաները, նրանց հետ և՝ քահանաներն ու տիրացուները, տաքարիւն երիտասարդներն ու 50—60 տարով բազմատանջ ժողովուրդ կեղեքելու բովից անցած ուստա սրիկաները, բոլորը, բոլորը «Դաշնակցական են...»

... «Մեծ շանսեր կան, որ X-րդ շրջանը կարող է հասնել 1898 թւականի Սալմաստի դրութեանը՝ շնորհիւ այն հանգամանքի, որ ինքնապաշտպանութեան գործն ինքն ըստ ինքեան տրամադիր է ենիչարներ ծնելու, իսկ ընդհարումները մեզ ժամանակ չեն տալիս ընդարձակ չափով խօսելու ժողովրդի հետ այդ երևոյթների մասին»։

«Բայց և այնպէս, որքան էլ խեղդելիս լինինք ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու դժւարին գործով, այնուամենայնիւ, հարկաւոր է ցոյց տալ ժողովրդին, որ Դաշնակցութիւնը գրպանահատներ ու աւազակներ հովանաւորող չէ, այլ նրանց դէմ մաքառող. որ Դաշնակցութեան ոյժը ոչ թէ մտրակի, այլ մտրակ խլելու մէջ է, որ Դաշնակցութիւնը երբէք չի կարող դաշնակցական հաշուել և ընդունել իւր մէջ նրանց, որոնք յղփացած են ժողովրդի հաշին»...։

Գաւառների վերաբերմամբ այդպիսի հայեացք են ունեցել Դաշնակցութեան ներկայացուցիչները. նրանք նախատեսել են նոյն իսկ ինքնապաշտպանութիւնից բղխելիք չարիքները. նրանք չէին կարող Դաշնակցութեանն ապաւինած հարիւր-հազարաւոր գիւղացիութիւնը դաշնակցական համարել. բայց հակառակորդներն այդ իմանալով հանդերձ՝ բոլոր չարիքների ծնողը և կատարողը Դաշնակցութիւնը համարեցին։ Այն մարդիկ, որ Պիղատոսի նման ձեռներն լուացած՝ արեան ու կրակի օրերում դատապարտելի անտարբերութեամբ մի կողմ էին կանգնել, արհաւիրքն անցնելուց յետոյ դուրս եկան մի ինչ-որ անհասկանալի մաղձով լցած և սկսեցին պոռհարել, անանարկել այն միակ տանջուած կուսակցութեանը, այն Դաշնակցութեանը, որ իւր արիւնն էր զոհաբերել ժողովրդի գոյութիւնը պահպանելու համար։ Մինչդեռ Դաշնակցութեան բոլոր հակառակորդները, մեծից մինչև փոքրը՝ չեն կարող ցոյց տալ մի մարդ Դաշնակցութեան պատկանողներից դուրս, որ գաւառներում, գիւղերում ինքն էլ գիւղացիների հետ կուրծքը դէմ տուած լինի տեղացող գնդակներին։

V.

Ինքնապաշտպանութեան ժամանակ Դաշնակցութիւնը տեսաւ հայ ժողովրդի ոյժը. այդ կորացած. վշտահար գիւղացիութիւնը վանդի բոպէներում երևան եկաւ իւր ամբողջ պատկերով, իւր ամբողջ հասակով։ Եւ դեռ ընդհարումների կէսին էր, որ մտածուեց ինքնապաշտպանութիւնը յանձնել ժողովրդին, միայն այն պայմանով, որ Դաշնակցութիւնը միաւ ժամանակ ղեկավարի դեր կատարէ, ապա, որոշ ժամանակից յետոյ՝ ղեկավարութիւնն էլ տալ ժողովրդական ներկայացուցիչների ձեռքը, և նրանց նըպաստել միայն զանազան ճանապարհներում, որոնք դեռ ևս անծանօթ էին ժողովրդին։

Կարծեմ առաջին անգամ այդ փորձն արուեց Վարանդայում, և բաւական յաջող, թեթև պակասութիւններով, որ շուտով պիտի հարթուէին, իբրև անփորձութեան հետևանքներ։ 1906 թուականի փետրուարի 5-ն էր այն օրը, երբ Վարանդայի 60 գիւղերից հաւաքուած ներկայացուցիչները պէտք է ընտրէին այն նոր մարմինն իրանց միջից, որ դաշնակցական ղեկավարներին կից մի մարմին կազմելով՝ միասին պէտք է վարէին ինքնապաշտպանութիւնը, մինչև որ բոլորովին վարժուէին, և ամեն ինչ յանձնուէր իրանց։

Բայց... հպատակների հանգստութիւնն «ապահովող» աչքերն արթուն հսկում էին, գործը ժամանակաւորապէս վիժեց, և մէկը մինչև այսօր՝ դեռ բանտի պատերն է ճանկռտում...։

Սուտ է, վիրաւորական է, երբ ասում են, թէ Դաշնակցութիւնը մեացրել է ժողովրդի ձեռներէցութեան ոգին. ընդհակառակը, նա զարգացրել է. դրան ապացոյց այն հանգամանքը, որ մի ժամանակ անտարբեր, սառած ու քնած հասարակութիւնն այժմ շարժուն և հետաքրքիր է դարձել։

Ինքնապաշտպանութեան ամբողջ պատմութիւնը բազմաթիւ փաստաթղթերի և վկայութիւնների հիման վրայ տալուց յետոյ միայն կարող է պարզուել, թէ Դաշնակցութիւնն ինչ խոշոր ծառայութիւն է մատուցել ժողովրդին՝ ինքնապաշտպանութեան ժամանակաշրջանում *)։

---

*) Դաշնակցութիւնը և ինքնապաշտպանութիւնը գրելուց՝ քաղուածքներ ենք արել թերթում տպագրած մեր յօդուածներից։ Ա.

ՎԵՐՋ

ՀԱՅ. ՀԵՂԻՓՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ՍՍՀ
Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Բախ.—Հարուստ. և աղքատ. II տպագրութիւն . . . 15 կոպ.
2. Պեշէխոնով.—Հաց, լոյս և ազատութիւն . . . . . 12 »
3. Ֆէդորովիչ.—Ինչպէս են ժողով. և ծախս. ժող վարդ. 5 »
4. Կարմեիլիկ.—Նոր լեր. քար. 2 »
5. Չերնով.—Գիւղ. և բանուորը 15 »
6. Պերնեռոսորճեր.—Ազգ. հարցը և սոց.-դեմոկրատիան . 5 »
7. Պրամպոլինի.—Գիւղացիներ. 5 »
8. Ե. Թոփչեան.—Արտեստ. միութիւններ . . . . . 15 »
9. Նովոսորմսկի.—Ինչ է իրական պետութիւնը . . . 15 »
10. Ն. Կաբանով.—Հող. հարցը Նոր-Զելիանդիայում . 2 »
11. Ժան Ժորէս.—Բուրժ. սեփ. և նրա ապագայ գրաւումը . 5 »
12. Ա. Աբեղեան.—Դեմոկ. ընտ. 12 »
13 Կաուցկի.—Ազգութիւնների հարցը Թուրքիստանում . 3 »
14. Ա. Անուռոնեան (Ղարիբ)—Ազատութեան ճանապար. 80 »
15. Ֆ. Լասալ.—Սահ.էութ. մաս. 5 »
16. Ա. Ն. Ինչպէս կարելի է լուծել հողային հարցը . 12 »
17. Վ. Գալուբեվ.—Ինչ է ժող. 2 »
18. Ս. Զաւարեան.—Վիճակագր. տեղ. գիւղ. ազգաբնակ. 25 »
19. Այմոնս Դիւնան—Ժողով. օրէնս. դաշ Զուրիխում 20 »
20. Դիկստեյն.—Ով ինչ է ապր. 7 »
21. —Մի գրոյց հողի մասին 5 »
22. Լ. Շիշկո —Ազգ. ծր հարցը 7 »
23. Ա. Նիկոլայեւ.—Կոօպերացիա 5 »
24. Շտապ. օգտ. ձեր իրաւունք. 1 »
25. Լ. Պեսրով.—Երկու ծրագիր 20 »
26. Ս. Վասսկ.—Պետ. կազմակերպ. հիմքերը Արևմուտ. 12 »
27. Անսկիյ.—Գիւղաց. հարցը Ֆրանսիայում 7
28. Մ. Յովհաննիսեան.—Դաշն. և նրա հակառակորդները 50 կոպ.
29. Ժ. Գէդ. եւ պ. Լամարգ.—Տնտես. զարգ և Սոցիալիզմ 5 »
30. Նովոսորմսկի.—Ազգ. հարցը, Ատոնոմիա և ֆէդերացիա 7 »
31. Խորամանկ կարգեր . . 7 »
32. Մ. Յովհաննիսեան.—Գործ. հանգոյցը (տաճկահ. խնդիրը վերջ. շրջ). . . . . 20 »
33. Հրահանգներ գտատ. համար
34. Վ. Չերնով.—Դասակարգային կռիվ թէորիայի շուրջը 10 »
35. Լ. Շիշկո.—Նուազագոյն ծրագիրը . . . . . 12 »
36. Ս. Նեկրասով.—Ինչ կարգեր են հարկաւոր ժողովրդին 10 »
37. Ա. Շախաբ.—Ֆէդերալիզմ և դեմոկրատիզմ . . . . 30 »
38. Արամայիս.—Վնասակարը 4 »
39. Արամայիս.—Մի քանի գլուխ հայ-թրքական ընդհար. . 25 »
40. Մ. Յովհաննիսեան.—Կովկ. Վանդ. (հայ-թրք. ընդհար.) : 5 »
41. Ն. Գորցեւ — Ինչպէս իրական. ազգութիւն. հաստ. . . 7 »
42. Գ. Խամակ.—Դէպի ֆէդեր. 80 »
43. Վ. Չերնով.- Պրոլետար. և աշխատաւոր գիւղացիութիւնը . . . . . 18 »
44. Աբրամով.—Գիւղացին և բանուորը . . . . . 3 »
45. Է. Վանդերվելդ —Բանուոր դասակարգ. գրութ. Բելգիայում 45 »
46. Ս. Զակ.—Հող և կապիտալիզմ . . . . . 15 »
47. Վանէ.—Անցատուածները 10 »
48 Մ. Յովհաննիսեան.—Փիլիսոփայ Սոցիոլոգ . . . . 15 »
51. Արամայիս. Մի քանի գլուխ հայ-թրքական ընդհարում. 10 »

Պատրաստւում են տպագրութեան համար մի շարք ուրիշ գրքեր։

Դիմել՝ Բազմ. «Մասրոդնիկին»
Երևան.—Ս. Օհանջանեանին.
Թիֆլիս Նիկ. Մատինեանին «Փարոս».

Յանկացողները կարող են ստանալ գրադարանի բոլոր գրքերը միասին, չըվճարելով ճանապարհածախսը։

ՀՀ Ազգային գրադարան
NL0412084